

Ե Ա Հ Կ

Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



«Ունիսոն» հասարակական կազմակերպություն



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ,  
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ



«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

**Հաշմանդամություն ունեցող անձանց համար  
բարձրագույն կրթության ֆիզիկական և ծրագրային  
մատչելիության,  
ինչպես նաև ակադեմիական ներառականության  
ուսումնասիրության**

# **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Սույն հետազոտությունն իրականացվել է  
ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ



Սույն հրատարակության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

**ISBN 978-92-9234-289-0**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ .....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	7
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԲՈՒՀԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	13
ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	16
ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	35
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	55
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	61
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ.....	64
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հարցվածների վերաբերյալ վիճակագրական տվյալներ .....	65
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հետազոտական գործիքներ .....	69
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված բույսերի ցանկ .....	107

## **ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ**

«Ունիտն» ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր այն անձանց և հաստատություններին, որոնց մասնակցությունը, տրամադրած ժամանակը և տեղեկատվությունը հնարավոր դարձրեցին սույն հետազոտության կայացումը:

Մենք երախտապարտ ենք ՀՀ կրթության և գիտության նախարարությանը և բուհերի ադմինիստրացիաներին՝ հետազոտության կազմակերպմանը աջակցելու համար:

**Հատուկ շնորհակալություն ԵԱՀԿ երևանյան գրասենյակին՝ բարձրագույն կրթության ներառականության խնդրի կարևորման և հետազոտության ֆինանսավորման համար:**

# ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

## *Հաշմանդամություն*

Համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, «հաշմանդամություն ունեցող անձինք ներառում են այն անձանց, որոնք ունեն երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական դժվարություններ, որոնք, տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում արգելակում են նրանց լիակատար և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքում՝ մյուսների հետ հավասար»:

## *Մատչելիություն*

Սույն հետազոտության շրջանակներում «մատչելիություն» եզրը կիրառվում է երեք իմաստով՝ ֆիզիկական միջավայրի մատչելիություն, տեղեկատվության մատչելիության և ծրագրային, ակադեմիական մատչելիություն: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան մատչելիության այս երեք իմաստները համատեղում է «համընդհանուր դիզայն» անվանմամբ, որը սահմանվում է որպես «ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների դիզայն, որը դրանք առավելագույնս օգտագործելի է դարձնում բոլորի համար՝ առանց շտկումների ու մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության: Համընդհանուր դիզայնը չի բացառում օժանդակ հարմարեցումները հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար:»

## *Ներառական կրթություն*

Ներառական կրթությունը համեմատաբար նոր երևույթ է ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ աշխարհում, և գոյություն չունի դրա միասնական, համընդհանուր համաձայնեցված սահմանում: Ինչպես ներառական կրթության գաղափարը, այնպես էլ դրա սահմանումը ճկուն է և բազմակողմանի: Սույն հետազոտության շրջանակներում ներառական կրթությունը սահմանվում է որպես գաղափարախոսությունների և գործելակերպի համակցություն, որը

...ընդունում, հարգում և հաշվի է առնում ուսանողների բազմազանությունը:

...փոփոխությունների և բարելավման անընդհատ զարգացող, դինամիկ գործընթաց է՝ ուղղված կրթական համակարգի հարմարեցմանը ուսանողների ամենալայն շրջանակի համար:

...ենթադրում է կրթական մշակույթի, քաղաքականության և գործելակերպի վերակազմակերպում՝ համապատասխան կրթական բազմաբնույթ առանձնահատկություններ ունեցող անձանց կարիքներին:

...բավական ճկուն և ընդգրկուն է ցանկացած ուսանողի լիակատար ներառման և նրա մասնակցության ապահովման համար:

... ենթադրում է վերաբերմունքային, քաղաքականության, գործընթացային, միջավայրային և ռեսուրսային արգելքների բացահայտմանն ու հաղթահարման ուղղված շարունակական աշխատանքներ:

... հնարավոր է դարձնում ավանդաբար մեկուսացված կամ մարգինալացված խմբերի ինտեգրումը ընդհանուր կրթական համակարգում:

...գործընթաց է, որին մասնակցում են շահագրգիռ բոլոր կողմերը՝ մանկավարժներ, ուսանողներ, ընտանիքի անդամներ, համայնքի ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակություն, որոշում կայացնողներ և այլն:

...ներառական հասարակության ստեղծմանն ուղղված առավել ընդգրկուն ռազմավարության մաս է կազմում:

...անհրաժեշտ, կիրառելի և արդիական է կրթական ամենատարբեր՝ ֆորմալ և ոչ ֆորմալ ձևաչափերի կազմակերպման համար ուսումնական բոլոր օղակներում՝ սկսած վաղ մանկական, տարրական և միջնակարգ փուլերից մինչև մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթություն:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, իսկ դրա իրացումը՝ անհատի ձևավորման, զարգացման, հետագա աշխատանքային զբաղվածության և հուսալի ապագայի հիմնական գրավականն է: Հաշմանդամություն ունեցող անձանց համար որակյալ կրթությունն առավել նշանակալի է, քանի որ սոցիալական այս խմբի համար կրթությունը ոչ միայն անձնային և մասնագիտական աճի երաշխիք է, այլ նաև երկրի սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական գործընթացներում նրանց մասնակցությունն ապահովող կարևորագույն գործոն:

Հայաստանի Հանրապետությունում ապրող ավելի քան 197,000<sup>1</sup> հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքում ինտեգրման նշակալի արգելք է ներառական կրթության գործուն համակարգի բացակայությունը, որը ոչ միայն անհնար է դարձնում կամ սահմանափակում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ուսումնական գործընթացներում, այլև բացասականորեն է ազդում կյանքի ընդհանուր որակի վրա:

Հայաստանում կրթական համակարգի ներառականության ապահովումը պաշտոնապես համարվում է ՀՀ կառավարության՝ կրթության ոլորտի առաջնահերթություններից մեկը և կրթական բարեփոխումների կարևոր բաղադրիչ: Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության կազմակերպումն ամրագրված է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն 2005թ.-ից ներառական կրթությունն ընդգրկվել է կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: Ավելին, ՀՀ կողմից վավերացված՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է. «Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն ընդհանուր բարձրագույն կրթությունը, մասնագիտական կրթությունը, մեծահասակների ուսուցումը և կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում: Այս նպատակով մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվեն անհրաժեշտ հնարավորություններ:» (Հոդված 24):

Սակայն, չնայած օրենսդրական որոշակի բարեփոխումների և ֆորմալ գործընթացների, հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթական համակարգը հիմնականում շարունակում է մնալ ոչ ներառական: Մինչդեռ հանրակրթության ներառականության ստեղծման ուղղությամբ որոշակի քայլեր են ձեռնարկվում, բարձրագույն կրթության ներառականության և մատչելիության ապահովման հարցը անգամ պատշաճ հնչեղություն չի ստանում:

Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորությունը ներառական հասարակության կայացման հարցում և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիակատար իրացման, ինտեգրման և արժանապատիվ կենսամակարդակի ապահովման տեսանկյունից, «Ունիտն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ հանձն է առել իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության ֆիզիկական և ծրագրային մատչելիության, ինչպես նաև ակադեմիական ներառականության ուսումնասիրություն:

Իր մասշտաբով և համակողմանիությամբ եզակի այս հետազոտությունն առաջինն է Հայաստանում, որ համապարփակ և օբյեկտիվ կերպով գնահատում է կրթության ներառականությունը և մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

1 ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն, դեկտեմբեր 2014

# ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Հետազոտության նպատակը և խնդիրները

2014 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, ձեռնմուխ եղավ գնահատել ՀՀ-ում բարձրագույն կրթության ֆիզիկական և ծրագրային մատչելիությունը, ինչպես նաև ակադեմիական ներառականությունը: Այդ նպատակով մշակվեց նշված հիմնախնդիրների ամբողջական ուսումնասիրությանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության հետևյալ մեթոդաբանությունը:

### Նպատակ՝

Գնահատել հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության ֆիզիկական, ծրագրային մատչելիությունը և ակադեմիական ներառականությունը:

### Խնդիրներ՝

- Հավաքագրել վիճակագրական տվյալներ հաշմանդամություն ունեցող ուսանողների վերաբերյալ,
- Իրականացնել հաշմանդամություն ունեցող ուսանողների համար ՀՀ բարձրագույն կրթության պայմանների գնահատում,
- Ուսումնասիրել շահագրգիռ կողմերի կարծիքը ՀՀ բարձրագույն կրթության ֆիզիկական, ծրագրային մատչելիության և ակադեմիական ներառականության վերաբերյալ (բուհերի ադմինիստրացիաներ, բուհերի դասախոսներ, տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք, հաշմանդամություն չունեցող անձինք և ուսանողներ),
- Գնահատել բուհերի՝ հաշմանդամություն ունեցող ուսանողներին ներգրավելու պատրաստականությունն ու կարողությունները,
- Ուսումնասիրել և գնահատել հանրային կարծիքն ու դիրքորոշումները հաշմանդամություն ունեցող անձանց և ներառականության գաղափարի վերաբերյալ,
- Բացահայտել հաշմանդամության տարբեր տեսակներ ունեցող անձանց համար բարձրագույն կրթություն ստանալու հիմնական խոչընդոտները և այն մարտահրավերները, որոնց ներկայումս բախվում են հաշմանդամություն ունեցող ուսանողները,
- Մշակել հաշմանդամություն ունեցող ուսանողների համար բարձրագույն կրթության ներառականությանն ուղղված առաջարկություններ:

## Հետազոտության մեթոդների ընտրություն

Հետազոտության նպատակի արդյունավետ իրագործման համար կիրառվել են սոցիոլոգիական հետազոտության քանակական և որակական մեթոդներ, ինչպես նաև դիտարկում և վիճակագրական տվյալների հավաքագրում: Վերլուծության բազմագործոնային մոդելի կիրառման շնորհիվ դուրս են բերվել և գնահատվել հիմնական շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը, վերաբերմունքը և դիրքորոշումը ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ:

Հետազոտության շրջանակներում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման քանակական և որակական հետևյալ մեթոդները՝

1. Հեռախոսային հարցում հետևյալ խմբերի հետ.
  - բարձրագույն կրթության համակարգում չներգրավված հաշմանդամություն ունեցող անձինք,
  - հանրություն:



2. Հարցում՝ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով հետևյալ խմբերի հետ.
  - հաշմանդամություն ունեցող ուսանողներ,
  - հաշմանդամություն չունեցող ուսանողներ:
3. Խորին հարցազրույցներ բուհերի ադմինիստրացիաների ներկայացուցիչների և դասախոսների հետ:
4. Վիճակագրական տվյալների ուսումնասիրություն՝ ընտրված 29 բուհերում հաշմանդամություն ունեցող ուսանողների և դասախոսների վերաբերյալ:
5. Դիտարկում՝ բուհերի ֆիզիկական մատչելիությունն ուսումնասիրելու համար:

Հետազոտության խնդիրների հիման վրա մշակվել են հետևյալ հետազոտական գործիքները (տե՛ս Հավելված՝)

- Հանրային կարծիքի հեռախոսային հարցման հարցաթերթ,
- Բարձրագույն կրթության համակարգում չներգրավված՝ հաշմանդամություն ունեցող անձանց հեռախոսային հարցման հարցաթերթ,
- Հաշմանդամություն ունեցող ուսանողների դեմ առ դեմ հարցման հարցաթերթ,
- Հաշմանդամություն չունեցող ուսանողների դեմ առ դեմ հարցման հարցաթերթ,
- Բուհերի ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցի հարցաշար,
- Բուհերի դասախոսների հետ խորին հարցազրույցի հարցաշար,
- Վիճակագրական տվյալների հավաքագրման հարցաշար,
- Ֆիզիկական մատչելիության դիտարկման քարտ:

Բոլոր հարցազրույցները իրականացվել են անանունության սկզբունքով, և հավաքագրված բոլոր տվյալները վերլուծության մեջ օգտագործվել են ընդհանրացված ձևով:

Կիրառված մեթոդների համակցությունը հնարավորություն տվեց գնահատել և մեկնաբանել ուսումնասիրվող երևույթը, շահագրգիռ հիմնական կողմերի տեղեկացվածության մակարդակը, վերաբերմունքը և դիքորոշումները բարձրագույն կրթության ոլորտում հաշմանդամություն ունեցողների ներառման խնդրի վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրել տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ բուհերի աշխատելու փորձը և նրանց ներգրավելու պատրաստակամությունը: Պատկերն առավել ամբողջական է դարձել բուհերի ֆիզիկական մատչելիության դիտարկման արդյունքում՝ գնահատական տալով ներառականության կարևորագույն չափանիշներից մեկին: Այս բոլոր մեթոդների կիրառման արդյունքում ստացված տվյալները հնարավորություն տվեցին համապարփակ պատկերացում կազմել Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում ներառականության արդի մակարդակի վերաբերյալ:

### **Հետազոտության ընտրանք**

Հետազոտությունն իրականացվել է Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, քանի որ բուհերի ճնշող մեծամասնությունը կենտրոնացված է այս երեք քաղաքներում. բաշխումը կատարվել է ելնելով այդ երեք քաղաքներում բուհերի խտությունից: Ընտրանքում ներառվել են ամենատարբեր ոլորտների պետական, ոչ պետական և միջպետական 29 բուհեր:

Հաշմանդամություն չունեցող ուսանողների ընտրանքի վստահելիության միջակայքը կազմել է 95%՝ տվյալների  $\pm 3.5\%$  սահմանային սխալով: Հանրային կարծիքի ուսումնասիրման դեպքում վստահելիության միջակայքը դարձյալ կազմել է 95%, իսկ սահմանային սխալը՝  $\pm 3\%$ : Հետազոտության ընթացքում հարցվել են հետևյալ հինգ խմբերի ներկայացուցիչները (տե՛ս Աղյուսակ 1):

### Աղյուսակ 1. Ընտրանքի նկարագրություն

Հարցվածներ	Ընտրանքային համախմբություն
Հաշմանդամություն ունեցող ուսանողներ	131
Հաշմանդամություն չունեցող ուսանողներ	811
Երևան քաղաքի և ՀՀ մարզկենտրոնների բնակիչներ	1122
Բարձրագույն կրթության համակարգում չներգրավված 18-35 տարեկան հաշմանդամություն ունեցող անձինք	316
Բուհերի ադմինիստրացիայի ներկայացուցիչներ	29
Բուհերի դասախոսներ	58
<b>Ընդամենը</b>	<b>2467</b>

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են բուհերի, հաշմանդամություն ունեցող ուսանողների և հաշմանդամություն չունեցող ուսանողների հետ ընտրանքային համախմբությունների հիմնական ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 2, 3 և 4):

### Աղյուսակ 2. Ուսումնասիրված բուհերի բաշխումն ըստ քաղաքների

Բուհի կարգավիճակ	Երևան	Գյումրի	Վանաձոր	Քանակ
Պետական բուհ	9	2	2	13
Ոչ պետական բուհ	12	1	1	14
Միջպետական բուհ	2	-	-	2
<b>Ընդամենը</b>	<b>23</b>	<b>3</b>	<b>3</b>	<b>29</b>

### Աղյուսակ 3. Հաշմանդամություն ունեցող ուսանողների ընտրանքային համախմբության բաշխումն ըստ բուհերի

Բուհի կարգավիճակ	Երևան		Գյումրի		Վանաձոր		Ընդամենը	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Պետական բուհ	93	70,9%	19	14,5%	4	3,1%	116	88,5%
Ոչ պետական բուհ	11	8,4%	-	-	2	1,5%	13	9,9%
Միջպետական բուհ	2	1,6%	-	-	-	-	2	1,6%
<b>Ընդամենը</b>	<b>106</b>	<b>80,9%</b>	<b>19</b>	<b>14,5%</b>	<b>6</b>	<b>4,6%</b>	<b>131</b>	<b>100,0%</b>

### Աղյուսակ 4. Հաշմանդամություն չունեցող ուսանողների ընտրանքային համախմբության բաշխումն ըստ բուհերի

Բուհի կարգավիճակ	Երևան		Գյումրի		Վանաձոր		Ընդամենը	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Պետական բուհ	543	66.9%	41	5.0%	29	3.6%	613	75.6%
Ոչ պետական բուհ	122	15.0%	13	1.6%	10	1.2%	145	17.9%
Միջպետական բուհ	53	6.5%	-	-	-	-	53	6.5%
<b>Ընդամենը</b>	<b>718</b>	<b>88.5%</b>	<b>54</b>	<b>6.7%</b>	<b>39</b>	<b>4.8%</b>	<b>811</b>	<b>100,0%</b>

Ուսանողների ընտրության հիմնական չափանիշներն էին.

- կուրսը,
- տարիքը,
- սեռը,
- ֆակուլտետը,
- ուսուցման համակարգը (առկա և հեռակա),
- ուսուցման փուլը (բակալավրիատ և մագիստրատուրա):

Հաշմանդամություն ունեցող ուսանողների դեպքում, վերոհիշյալ չափանիշներից բացի, հաշվի են առնվել նաև հաշմանդամության տեսակը և խումբը:

Աղյուսակ 5-ում և 6-ում ներկայացված է հանրային կարծիքի ուսումնասիրման համար ընդգրկված բնակչության և հաշմանդամություն ունեցող անձանց ընտրանքային համախմբությունների բաշխումն ըստ մարզերի:

**Աղյուսակ 5. Բնակչության ընտրանքի բաշխվածությունն ըստ մարզերի**

ՀՀ մարզեր	Քանակ	Տոկոս
Երևան	735	65,50%
Շիրակ	88	7,80%
Լոռի	66	5,90%
Սյունիք	42	3,70%
Կոտայք	42	3,70%
Արմավիր	33	2,90%
Արարատ	30	2,70%
Արագածոտն	27	2,40%
Տավուշ	26	2,30%
Վայոց Ձոր	20	1,80%
Գեղարքունիք	13	1,20%
<b>Ընդամենը</b>	<b>1122</b>	<b>100%</b>

Ընդհանուր բնակչության ներկայացուցիչների ընտրության հարցում կիրառվել է բազմաստիճան քվոտային ընտրանքի մեթոդաբանությունը: Ընտրության չափանիշներն էին.

- սեռը,
- տարիքը:

**Աղյուսակ 6. Բարձրագույն կրթության համակարգում չներգրավված, հաշմանդամություն ունեցող անձանց ընտրանքային համախմբության բաշխումն ըստ մարզերի.**

ՀՀ մարզեր	Քանակ	Տոկոս
Երևան	223	70,6%
Լոռի	48	15,2%
Արարատ	14	4,4%
Գեղարքունիք	9	2,8%
Կոտայք	7	2,2%
Շիրակ	5	1,6%
Արագածոտն	4	1,3%
Արմավիր	2	0,6%
Վայոց Ձոր	2	0,6%
Սյունիք	1	0,3%
Տավուշ	1	0,3%
<b>Ընդամենը</b>	<b>316</b>	<b>100%</b>

Այս խմբի մեջ ներառման չափանիշներն էին.

- թերի բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն,
- տարիք՝ 18-35 տարեկան,
- սեռ,
- հաշմանդամության տեսակ,
- հաշմանդամության խումբ:

Այս բոլոր անձինք պոտենցիալ ուսանողներ են, որոնք, սակայն, այս կամ այն պատճառով ներգրավված չեն բարձրագույն կրթության համակարգում:

Խորին հարցազրույցներ են իրականացվել 87 անձանց հետ՝ յուրաքանչյուր բուհում 2 դասախոս և ադմինիստրացիայի 1 ներկայացուցիչ: Բուհերի ադմինիստրացիաների ներկայացուցիչների ընտրության չափանիշն էր նրանց իրազեկվածությունը բուհի ակադեմիական ծրագրերի, պաշտոնական փաստաթղթերի, բուհի պատմության, տեխնիկական հազեցվածության, ֆիզիկական մատչելիության, ուսանողների հետ տարվող աշխատանքների և այլ գործառնական դրույթների մասին: Արդյունքում, հարցմանը մասնակցած ադմինիստրացիայի ներկայացուցիչները հանդիսացել են 2 և ավելի տարիների աշխատանքային փորձ ունեցող ասիստենտներ, գիտությունների թեկնածուներ, դոցենտներ և պրոֆեսորներ, որոնք զբաղեցնում էին հետևյալ պաշտոնները՝

- ռեկտոր,
- պրոռեկտոր,
- աշխատակազմի ղեկավար,
- դեկան,
- ամբիոնի վարիչ,
- ուսումնական գծով փոխտնօրեն,
- շրջանավարտների պրակտիկայի և կարիերայի կենտրոնի ղեկավար,
- ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի վարիչ,
- որակի ապահովման կենտրոնի տնօրեն,
- արտաքին կապերի բաժնի պետ,
- իրավաբանական բաժնի պետ,
- ուսումնական բաժնի աշխատակից,
- գործավար:

Բուհերի դասախոսների ընտրության հարցում կիրառվել է բազմաստիճան քվոտային ընտրանքի մեթոդաբանությունը՝ ընտրության հետևյալ չափանիշներով

1. տվյալ բուհում աշխատանքային ստաժը՝
  - մինչև 10 տարի,
  - 10 տարուց ավելի
2. սեռը՝
  - կին,
  - տղամարդ
3. ֆակուլտետը, որտեղ դասախոսը դասավանդում է. ընտրանքում ապահովվել է տարբեր ֆակուլտետներում դասավանդող դասախոսների ներգրավվածությունը:

### **Հետազոտության իրականացման փուլեր**

Մույն հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

I փուլ – Նախապատրաստական աշխատանքներ.

⇒ հետազոտության մեթոդաբանության մշակում,

- ⇒ հետազոտության պլանավորում,
- ⇒ հետազոտության գործիքների մշակում,
- ⇒ ՀՀ ԿԳՆ-ից պաշտոնական թույլտվության ձեռքբերում,
- ⇒ բուհերի հետ պայմանավորվածությունների ձեռքբերում,
- ⇒ հարցազրուցավարների ուսուցում-հրահանգավորում,
- ⇒ մատչելիության դիտարկողների ուսուցում-հրահանգավորում,
- ⇒ գործիքների փորձարկում և վերջնականացում:

## II փուլ – Դաշտային աշխատանքներ.

- ⇒ դաշտային աշխատանքների պլանավորում,
- ⇒ քանակական հարցումների և որակական հարցազրույցների անցկացում,
- ⇒ բուհերի ֆիզիկական մատչելիության դիտարկում,
- ⇒ վիճակագրական տվյալների հավաքագրում,
- ⇒ դաշտային աշխատանքների որակի ստուգում:

## III փուլ – Տվյալների մշակում.

- ⇒ հարցաթերթում ընդգրկված բաց և կիսաբաց հարցերի փակում,
- ⇒ բաց հարցերի պատասխանների կոդավորում,
- ⇒ քանակական տվյալների մուտքագրում SPSS ծրագրային բազա,
- ⇒ տվյալների բազայի մաքրում,
- ⇒ որակական տեղեկատվության վերծանում և խմբավորում:

## IV փուլ – Հաշվետվության պատրաստում.

- ⇒ քանակական տվյալների վերլուծություն,
- ⇒ որակական տվյալների վերլուծություն,
- ⇒ բուհերի ֆիզիկական մատչելիության վերլուծություն,
- ⇒ քանակական և որակական տվյալների, ֆիզիկական մատչելիության վերլուծության և վիճակագրական տվյալների համադրում և եզրակացությունների կազմում,
- ⇒ ստացված արդյունքների հիման վրա գործնական հանձնարարականների մշակում,
- ⇒ արդյունքների ներկայացում ներքին և արտաքին շահագրգիռ կողմերին:

## ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԲՈՒՀԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ճշգրիտ և հուսալի տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց կրթական իրավունքի պաշտպանության, դրա խթանման և իրացման կարևորագույն նախապայմաններն են և պետք է առանցքային դեր ունենա կրթական բոլոր գործընթացների կազմակերպման հարցում: Կարևորելով վիճակագրական տվյալների հավաքագրման նշանակությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար բարեփոխումներ կատարելու հարցում, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է, որ քաղաքականությունների ձևավորման և իրականացման համար պետք է հավաքագրվի համապատասխան տեղեկատվություն, ներառյալ վիճակագրական և հետազոտական տվյալներ (Հոդված 31, Վիճակագրություն և տվյալների հավաքագրում): Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ կարևորագույն միջազգային փաստաթղթի այս դրույթը հատկապես նշանակալի է բարձրագույն կրթության ոլորտում:

Բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողների լիարժեք ներգրավվումը ենթադրում է անհատական մոտեցում, որն անհնար է առանց այդ ուսանողների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության առկայության: Այս տեղեկատվությունը ենթադրում է անձի հաշմանդամության տեսակի, խմբի և դրանցից բխող հատուկ կարիքների վերաբերյալ: Հասկանալու համար, որքանով են բուհերը տիրապետում նման տեղեկատվությանը, հետազոտության ընթացքում հավաքագրվել է վիճակագրական տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող ուսանողների և դասախոսների վերաբերյալ (տե՛ս Հավելված 2):

Վիճակագրական տվյալները կարևոր են ոչ միայն հենց բուհերի համար՝ կրթության կազմակերպման տեսանկյունից, այլ նաև պետական մարմինների և իրավապաշտպան կազմակերպությունների համար՝ համապատասխան ծրագրերի և միջոցառումների նախագծման և իրականացման համար:

Հետազոտության շրջանակներում հավաքագրված վիճակագրական տվյալների հիման վրա նախատեսվում էր ստանալ ամբողջական թվային պատկեր բարձրագույն կրթության համակարգում ներգրավված հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ: Սակայն, հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ հաշմանդամություն ունեցող ուսանողների և դասախոսների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես և Հայաստանում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները առհասարակ, ճշգրիտ և համապարփակ չեն և լիարժեք չեն արտացոլում ներկայիս իրավիճակը:

Ուսումնասիրված 29 բուհերում դասավանդող 7877 դասախոսների 0,7%-ը (56 հոգի) որևէ հաշմանդամություն ունեն: Հարկ է նշել, որ առաջին խմբի հաշմանդամություն դասախոսներ չկան, 21,4% (12 հոգի) երկրորդ խմբի հաշմանդամություն ունեն և 55,4% (31 հոգի)՝ երրորդ:

Ընդհանուր առմամբ, հաշմանդամություն ունեցող դասախոսների վերաբերյալ վիճակագրական տվյալները թերի են և ոչ համակարգված: Հետազոտության մեջ ընդգրկված 29 բուհերից միայն 13-ն են տրամադրել տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող դասախոսների թվի վերաբերյալ: Իսկ դասախոսների հաշմանդամության խմբի վերաբերյալ տվյալներ են տրամադրել միայն 7 բուհեր:

**Աղյուսակ 7. Բուհերի դասախոսներն՝ ըստ հաշմանդամության խմբի.**

Հաշմանդամության խումբ	Քանակ	Տոկոս
Առաջին խմբի հաշմանդամություն	-	-
Երկրորդ խմբի հաշմանդամություն	12	21.4%
Երրորդ խմբի հաշմանդամություն	31	55.4%
Հաշմանդամության խումբը հայտնի չէ	13	23.2%
<b>Ընդամենը</b>	<b>56</b>	<b>100.0%</b>

Ուսումնասիրված 29 բուհերում սովորում է 73581 ուսանող, որոնցից 339-ը ունեն հաշմանդամություն: Այսպիսով, ըստ բուհերի տրամադրած պաշտոնական տվյալների, *հաշմանդամություն ունեցող ուսանողները կազմում են հետազոտված բուհերի ուսանողների ընդամենը 0,5%-ը*: Ըստ Առողջապահության միջազգային կազմակերպության վերջին տվյալների, աշխարհի բնակչության 15 տոկոսն ունի այս կամ այն տեսակի հաշմանդամություն: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կամ հաշմանդամություն ունեցող ուսանողների վերաբերյալ տեղեկատվությունը խիստ թերի է, կամ հաշմանդամություն ունեցող անձանց միայն աննշան մասն է փաստացի ներգրավված բարձրագույն կրթական համակարգում:

Վիճակագրության համաձայն, հաշմանդամություն ունեցող ուսանողների մեծամասնությունը՝ 58,7%-ը, ունեն երրորդ խմբի հաշմանդամություն, 19,5%-ը՝ երկրորդ խմբի հաշմանդամություն, 5,3%-ը՝ առաջին: Միևնույն ժամանակ, վիճակագրությունը դարձյալ լիարժեք չէ. հաշմանդամություն ունեցող ուսանողների 16.5 տոկոսի վերաբերյալ բուհերը տեղեկություններ չունեն (տե՛ս Աղյուսակ 8):

Թերի է նաև հաշմանդամության տեսակի վերաբերյալ վիճակագրությունը: Հաշմանդամություն ունեցող ուսանողների 48,4 տոկոսի հաշմանդամության տեսակի վերաբերյալ բուհերը տեղեկություններ չունեն: Սա հատկապես անհանգստացնող է, քանի որ հենց հաշմանդամության տեսակի վերաբերյալ իրազեկվածությունն է հնարավորություն տալիս բուհի ղեկավարությանը և դասախոսներին ապահովել անձի անհատական կրթական և այլ կարիքներին համապատասխան պայմաններ:

Ըստ ստացված տվյալների, հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողները կազմում են 9,7%, տեսողական խնդիրներ՝ 7,4%, լսողական խնդիրներ՝ 1,2%, խոսքային խնդիրներ՝ 1,2%, և 32,1% այլ հաշմանդամություն ունեն: Հարկ է նշել նաև, որ վիճակագրական տվյալների համաձայն, մտավոր խնդիրներ ունեցող ոչ մի ուսանող ուսումնասիրված բուհերում չկա:

**Աղյուսակ 8. Հաշմանդամություն ունեցող ուսանողների բաշխումն ըստ հաշմանդամության խմբի.**

Առաջին խմբի հաշմանդամություն	5.3%
Երկրորդ խմբի հաշմանդամություն	19.5%
Երրորդ խմբի հաշմանդամություն	58.7%
Հաշմանդամության խումբը հայտնի չէ	16.5%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

**Աղյուսակ 9. Հաշմանդամություն ունեցող ուսանողների բաշխումն ըստ հաշմանդամության տեսակի.**

Հենաշարժողական խնդիրներ ունեցող	9.7%
Տեսողական խնդիրներ ունեցող	7.4%
Լսողական խնդիրներ ունեցող	1.2%
Խոսքային խնդիրներ ունեցող	1.2%
Մտավոր հաշմանդամություն ունեցող	-
Այլ հաշմանդամություն ունեցող	32.1%
Հաշմանդամության տեսակը հայտնի չէ	48.4%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

Հաշմանդամություն ունեցող ուսանողների 62,3%-ն արական սեռի ներկայացուցիչներ են, 37,7%-ը՝ իգական: Առկա ուսուցման համակարգում սովորում են հաշմանդամություն ունեցող ուսանողների 68,1%-ը, իսկ 31,9%-ը՝ հեռակա: Բակալավրիատում սովորում են նրանց 78%-ը, իսկ 22%-ը մագիստրատուրայում են սովորում:

**Աղյուսակ 10. Հաշմանդամություն ունեցող ուսանողների բաշխումն ըստ սեռի.**

Իգական սեռի	37.7%
Արական սեռի	62.3%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

**Աղյուսակ 11. Հաշմանդամություն ունեցող ուսանողների բաշխումն ըստ ուսուցման համակարգի.**

Առկա ուսուցման համակարգում	68.1%
Հեռակա ուսուցման համակարգում	31.9%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

**Աղյուսակ 12. Հաշմանդամություն ունեցող ուսանողները բակալավրիատում և մագիստրատուրայում.**

Բակալավրիատում	78%
Մագիստրատուրայում	22%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

Ամփոփելով ստացված վիճակագրական տեղեկատվությունը, կարելի է եզրակացնել, որ բուհերում հաշմանդամություն ունեցող ուսանողների վերաբերյալ տեղեկատվությունը թերի է: Ավելին, առկա տվյալները բուհերի կողմից հիմնականում կիրառվում են ֆինանսական հարցերի կարգավորման նպատակով. ՀՀ օրենսդրությունը 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունք է շնորհում դիմել պետական բուհերի մրցույթից դուրս տեղերի համար (պետպատվերի շրջանակներում), որն էլ պարտավորեցնում է բուհերին տեղեկատվություն հավաքագրել ուսանողների հաշմանդամության խմբի վերաբերյալ:



## ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԶԲՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բուհական կրթության կարևորագույն բաղադրիչներից է ուսանող-դասախոս-ադմինիստրացիա արդյունավետ շփումը և համագործակցությունը: Ներառական կրթության համակարգը համեմատաբար նոր է մեր երկրում, և բուհերի դասախոսների ու ադմինիստրատիվ աշխատողների տեղեկացվածությունն ու պատրաստակամությունը ներառական կրթության ներդրման կարևորագույն շարժիչներն են:

Ադմինիստրատիվ աշխատողներն են կոչված ապահովել համապատասխան ընթացակարգեր, ֆիզիկական և կրթական մատչելիության չափանիշների լիարժեք իրագործումը, տրամադրել անհրաժեշտ ծառայություններ, ուղղորդել համապատասխան մասնագետների վերապատրաստումը և ողջ համակարգի աշխատանքը: Միաժամանակ, ողջ գործընթացում առաջնային խնդիր է հարգանքը դեպի անձի արժանապատվությունը, գաղտնիության սկզբունքի պահպանումը, ուսումնական գործընթացի առավելագույն արդյունավետության ապահովումը:

Մյուս կողմից, դասախոսական անձնակազմն է մասնագետի պատրաստման անմիջական երաշխավորը և պատասխանատուն: Այդ առումով դասախոսների իրազեկվածությունը և ոչ խտրական վերաբերմունքը պարտադիր նախապայման են ներառական կրթության կայացման համար: Անձի մասնագիտական ինքնագնահատականը անմիջականորեն կախված է դասախոսի վերաբերմունքից. եթե հաշմանդամության վերաբերյալ դասախոսի վերաբերմունքը հազեցած է զանազան կարծրատիպերով, դա կարող է անձի մասնագիտական կայացման լուրջ խոչընդոտ դառնալ:

Թերևս, անհնար է թերագնահատել դասախոսների և ադմինիստրատիվ աշխատակազմի դերը ներառական կրթության կայացման գործընթացում: Ներառական կրթության և մասնավորապես հաշմանդամության վերաբերյալ այս երկու խմբերի իրազեկվածությունը, պատրաստակամությունը և վերաբերմունքը հասկանալու, ինչպես նաև գործընթացի փաստացի կազմակերպման մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար դասախոսների և ադմինիստրացիայի աշխատողների հետ իրականացվել են խորին հարցազրույցներ (տե՛ս Հավելված):

### ***Ներառական կրթության և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ բուհերի դասախոսների և ադմինիստրացիայի ներկայացուցիչների դիրքորոշումները***

Ներառական կրթության և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ բուհերի դասախոսների և ադմինիստրացիայի ներկայացուցիչների դիրքորոշումները նախևառաջ պայմանավորված են նրանց տեղեկացվածության աստիճանով: Ինչպես պարզ դարձավ հետազոտության ընթացքում, ներառական կրթության վերաբերյալ տեղեկացվածությունը բավարար չէ՝ 87 հարցվածներից 11-ն ընդհարապես ծանոթ չեն ներառական կրթության գաղափարին: Իսկ երևույթին ծանոթ անձանց մեծամասնությունը ներառական կրթության մասին միայն մակերեսային պատկերացում ունի. ակնհայտ է այդ անձանց մոտ ներառական կրթության չափանիշների մասին հստակ գիտելիքների պակասը: Ադմինիստրացիայի միայն 4 ներկայացուցիչներ են հայտնել իրենց տեսակետը՝ շեշտադրելով բուհական կառույցների ֆիզիկական անմատչելիությունն ու որոշ տեսակների հաշմանդամություն ունեցողների (տեսողական և լսողական խնդիրներով անձանց) համար կրթության կազմակերպման անհնարինությունը:

*...բազմաթիվ թերություններ ու խնդիրներ կան հայաստանյան բուհերի՝ այդ սրան-դարյուններին համապարասխանելիության հարցում, և դա օբյեկտիվորեն է առաջանում, քանի որ գերագույն խնդիրը կայանում է նրանում, որ մենք ընթրօրինակում ենք դրսինը, որը, ինչ խոսք, կարող է արրարեգիական տեսակերից ճիշտ համարվել, սակայն տակտիկական տեսակերից պերք է առանձնահարուկ մորեցում լինի: ...Բոլորս միանշանակ համաձայն ենք, որ այդ խնդիրը լիարժեք լուծում պերք է սրանս, սակայն դրս համար համապարասխան քայլերը որոնք են, ինչպես պերք է մենք այդ ճանսպարհը հաղթահարենք, սհս այս հարցերի պարասխանները չունենք (ոչ պերական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, սր.):*

*...Հայաստանի բարձրագույն կրթությունը չի համապատասխանում ներառական կրթության չափանիշներին, որովհետև ոչ մի բուհում չկան համապատասխան շենքային պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր կրթություն արանալ ցանկացող հաշմանդամություն ունեցող անձ կարողանա դիմել, դրանից բացի, փոխադրման հնարավորությունները սահմանափակված են: ...Մեր բուհում առաջին հարկի մուտքի ասփճանավանդակը հարմարացված է հաշմանդամների տեղաշարժն ապահովելու համար, բայց մնացած անհրաժեշտ պայմանները բացակայում են, որովհետև շենքը կառուցված է վաղուց՝ դեռևս ԽՍՀՄ ժամանակ, և այս ինդիքը բոլոր բուհերին է վերաբերում (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

Տեսագոտության արդյունքները վկայում են, որ ինչպես ներառական կրթության չափանիշների, այնպես էլ կոնվենցիայի վերաբերյալ հարցվածների տեղեկացվածության մակարդակը բավական ցածր է: Հարցվածներից միայն 6-ն արտահայտեցին կոնվենցիայի վերաբերյալ որոշակի դիրքորոշում, դիտարկելով այն որպես մարդասիրական ուղենիշ: Մինևույն ժամանակ, հարցվածները կարևորում են կոնվենցիան ազգային մտածելակերպին հարմարեցնելու անհրաժեշտությունը և դրա դրույթների իրագործումն այնպես, որ վերջիններս չկրեն ձևական ու ընդհանրական բնույթ: Պետական բուհերի ներկայացուցիչները կոնվենցիայի դրույթների պահպանման և դրանց իրագործման հետևողականության հարցում կարևորել են հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը՝ պետության հետ փոխհամագործակցության պայմաններում:

*...Միանշանակ դրական են գնահատում կոնվենցիան, որովհետև եթե մենք բոլորս հերկենք կոնվենցիայի բոլոր հոդվածներին, ապա շար բաների կարող ենք հասնել, այսինչ, հասարակությունը դեռևս տեղյակ չէ, որ գոյություն ունի նման կոնվենցիա, որը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն է պաշտպանում (ոչ պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Ես անգամ միջոցառում են կազմակերպել կոնվենցիայի հետ կապված: Եթե գլոբալ վերցնեք, ապա կոնվենցիան ինքնին դրական երևույթ է, սակայն բացասական երանգը կայանում է նրանում, որ հաշվի չեն առնվում տեղական, ազգային մենթալիտետը, մեր կենցաղը (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...ՄԱԿ-ը շար գեղեցիկ ձևակերպել է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն հավասար իրավունքներ: Միակ անհանգստությունն այն է, որ պետք է հասանելի դարձնել այն ամենը, ինչը հնարավոր է հասցնել, այսինքն՝ եթե կառույցների հետ է կապված, պետք է դրանք մարչելի դարձնել, եթե մարդու ֆիզիկականի հետ է կապված, ապա պետք է դա փոխարացնել, որպեսզի նա կարողանա ինտեգրվել և մասնակցել հասարակական կյանքին: Բայց մեխանիզմները, թե ինչպես դա պետք է արվի զարգացած երկրներում և սոցիալապես վար փճակում գրավող կամ զարգացող երկրներում, ՄԱԿ-ը չի նշել (պետական բուհի դասախոս, իգ.):*

Ներառական կրթությանը ծանոթ հարցվածների կարծիքով ՀՀ-ում ներառական կրթությունը դեռևս զարգացման փուլում է: Դասախոսների և ադմինիստրացիաների վերաբերմունքը ներառական կրթության հանդեպ հիմնականում դրական է: Գերակշռող է այն կարծիքը, որ ներառական կրթությունը իրավական և մարդկային արժեքների տեսակետից հավասար պայմաններ է ստեղծում, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք կրթվեն հաշմանդամություն չունեցող անձանց հետ միասին: Ավելին, ներառական կրթության համակարգի կիրառումը, հատկապես բուհերի ադմինիստրացիաների ներկայացուցիչների կողմից դիտարկվում է որպես ազատ և առողջ հասարակություն ունենալու նախապայման: Հարցվածները հատկապես կարևորեցին ներառական կրթության հետևողական ներդրումը կրթության տարբեր մակարդակներում՝ նախակրթարաններում, դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և բուհերում:

*...Մենք հաշմանդամություն ունեցող անձանց պետք է հնարավորություն տանք ամբողջականորեն ներառվել հասարակության մեջ, այսինքն՝ պետք է նրանց համար սոցիալական, ֆիզիկական պայմաններ սրբեցնենք, որպեսզի նրանք կարողանան լավ կրթություն ստանալ և ուսանողների միջև ոչ մի տարբերություն չդնենք (ոչ պետական բուհի դասախոս, իգ.):*

...Այսպես երկու կարծիք պետք է, պետք է հնարավորինս օժանդակել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ արանսան լիարժեք կրթություն, իսկ թե ինչքանով է դա հնարավոր, արդեն կախված է և՛ բուհական համակարգից, և՛ փվյալ մարդուց: Հաշմանդամություն ունեցող մարդն էլ պետք է իրեն սրիպի, որ գա բուհ ու սովորի. շարերն՝ իրենք չեն ուզում (ոչ պետական բուհի դասախոս, ար.):

...Պետք է բոլոր հաշմանդամություն ունեցող անձինք իրենց ունակությունները փորձեն կրթության ոլորտում, որպեսզի կայանան առաջին հերթին որպես քաղաքացիներ, այսինքն՝ կրթություն ունենանալուց հետո կարողանան իրենք իրենց աշխատանքով ապահովել, որպեսզի չսպասեն, թե պետությունից կկարողանան, արդյոք, նպաստ արանալ, չնայեն հարազարների, բարեկամների օգնությանը... Հաշմանդամություն ունեցող մարդը պետք է լինի նույն քաղաքացին, ինչպես հաշմանդամություն չունեցողը (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):

...Ներառական կրթությամբ միզուցե փոխենք սրեղծված կարծրաբերիպերը հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ, իսկ դա, այսպես ասած, նվիրյալների գործ է (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իզ.):

...Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ մարդիկ շար ավելի ուժեղ են, շար ավելի դրական աչքերով են նայում կյանքին, քան ոչ հաշմանդամները, որոնք ավելի թերահավատ են: Իսկ երբ հաշմանդամություն ունեցող մարդիկ համարձակությամբ ներս են գործում հասարակության որոշակի շերտեր, մասնավորապես բուհ, իրենք փոխում են մրաօձելակերպը, նրանց ներկայությունը արդեն իսկ սրիպում է, որպեսզի մյուսները ավելի հումանիստական մոտեցում ցուցաբերեն (ոչ պետական բուհի դասախոս, իզ.):

Հարցվածները շեշտել են ներառական կրթության ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Դասախոսները և ադմինիստրատիվ աշխատակիցներն առանձնացրել են ՀՀ-ում ներառական կրթության հետևյալ դրական կողմերը.

- ⇒ հաշմանդամություն ունեցող մարդիկ իրենց հասարակությունից օտարված չեն համարում, իրենց զգում են հասարակության լիարժեք անդամներ,
- ⇒ իրացվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթության իրավունքը,
- ⇒ իրացվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքի իրավունքը,
- ⇒ աստիճանաբար վերանում է հասարակության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ դրսևորվող վատ վերաբերմունքը (ծաղրանք, արհամարհանք, անտեսում, ժխտում),
- ⇒ նպաստում է հասարակության կարծրատիպային մտածողության փոփոխմանը,
- ⇒ բացի պետությունից, այլ կազմակերպություններ (ՀԿ ոլորտ, մասնավոր ոլորտ, միջազգային կազմակերպություններ) և ստանձնում են հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման առաքելությունը,
- ⇒ ներառական կրթությունը ներդրվելով բուհական կրթությանը նախորդող օղակներում (մանկապարտեզ, դպրոց)՝ նպաստում է հաշմանդամություն ունեցող մարդկանց սոցիալականացմանը հենց վաղ տարիքից,
- ⇒ բացահայտում է հաշմանդամություն ունեցող մարդկանց ներուժը և ինքնաիրացման հնարավորություն է ընձեռում,
- ⇒ նպաստում է հասարակության մեջ մարդասիրության տարածմանը:

Ինչ վերաբերում է բացասական կողմերին, հարցվածները հիմնականում շեշտադրել են ոչ թե ներառական կրթության թերությունները, այլ բարձրագույն կրթության ոլորտում ներկայումս առկա այն բացերն ու խնդիրները, որոնք խոչընդոտում են ներառական կրթության կիրառմանը գործնականում: Հարցվածների կարծիքով, ներառական կրթության համակարգը, հատկապես հասարակության վերաբերմունքի փոփոխության առումով, դեռևս ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին: Մա ուղղակիորեն պայմանավորված է ինչպես տեղեկատվական անհամաչափությունների առկայությամբ ու մասնագիտական ռեսուրսների պակասով, այնպես էլ հասարակության ոչ միանշանակ վերաբերմունքով: Այս ամենից գատ, հարցվածները ներկայացրել են

ներառական կրթության բացասական կողմերի մասին իրենց տեսակետները. նրանց մի մասը իրավիճակը համարել է ժամանակավոր և ապագայում կանխատեսել ավելի կայուն առաջընթաց, իսկ մյուս մասը՝ համակարգի ներդրման փորձերը համարել է գուր ջանքեր և անհաջող որոշում: Այսպիսով, հարցվածները նշել են ներառական կրթության ոլորտում առկա հետևյալ **խնդիրները և բացերը**.

- ⇒ համապատասխան մասնագետների պակաս,
- ⇒ առկա մասնագետների որակավորման ցածր մակարդակ,
- ⇒ բազմամասնագիտական թիմում որոշ նեղ մասնագետների (օրինակ՝ ադապտատիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետ) բացակայություն,
- ⇒ բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց ներառում՝ առանց վերապահումների (որոշ հարցվածներ այն կարծիքին են, որ մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ պետք է առանձին սովորեն),
- ⇒ հաշմանդամություն չունեցող երեխաները հաշմանդամություն ունեցողներից որոշ վարքային նմուշներ են ընդօրինակում,
- ⇒ հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները շեշտադրվում են:

*...Ներառական կրթության համակարգում ներգրավված մանկավարժները դեռևս պարբարասր չեն երեխաների հետ շփմանը: Եթե դասարանում կա աշակերտ, որն ունի հատուկ կարիք, ուսուցիչը այնքան է կենտրոնանում նրա վրա, որ թեկուզ միայն գիրելիքի առումով տուժում են մնացած աշակերտները, այնինչ խնդիրը հաշմանդամներին խրախուսելն է, ոչ թե մնացածի կրթական մակարդակը իջացնելը: Սա գալիս է թե՛ հատուկ մանկավարժների փորձ չունենալուց, թե՛ հմտությունների պակասից ու պարբարասր չլինելուց (**պեդագոգական բուհի դասախոս, ար.**):*

*...Հստակ մեթոդաբանություն չկա, քանի որ կան առարկաներ, որոնք հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է առանձին անցնեն, ու պետք է մասնագիտական «սքրի-նիսգ» արվի, հետո նոր դասարանները իմբավորվեն, ոչ թե ուղղակի մի շարք հաշմանդամների բերեն ու տեղավորեն ոչ հաշմանդամ աշակերտների հետ (**պեդագոգական բուհի դասախոս, իգ.**):*

*...Միգուցե ըստ օրենքի պետք է ապահովվի հասարակության բոլոր անդամների հավասար կրթություն ստանալու իրավունքը՝ անկախ նրանց ֆիզիկական, մտավոր վիճակից, սակայն եթե վերանանք իրավունքի հարթությունից, ապա ես կարծում եմ, որ բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց մի դաշտ բերելը այդքան էլ ճիշտ չէ, քանի որ մտավոր հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առանձնաձև են, պետք է նրանց գերծ պահել հասարակությունից (**ոչ պեդագոգական բուհի դասախոս, ար.**):*

*...Երեխաները երբ լինում են խնդիրներ ունեցողների հետ, սպունգի նման նրանցից սկսում են ներքաշել կամ ձեռք բերել իրենց խնդիրները, ընդօրինակել շարժումները, արդյունքում չկակազողը սկսում է կակազել, լավ լսողը սկսում է հարցը մի քանի անգամ փակ, իսկ մեկ ուրիշն էլ սկսում է գոռալով խոսել (**ոչ պեդագոգական բուհի դասախոս, իգ.**):*

*...Իմ կարծիքով, հաշմանդամություն ունեցող երեխան ընդհանուր դասարանում, ոչ հաշմանդամների կողքին առաջին հերթին սթրես կապրի, որովհետև մեր հասարակության մեջ ինքն իրեն գնահատում է թերարժեքորեն, իրեն զգում է սարսափելի կոմպլեքսների և բարդությունների մեջ: Հիմա այդ երեխային ճիշտ է հանել ու բերել մեջտեղ, որպեսզի ինքնագրվի հասարակության մեջ, և արդյո՞ք նա կինքնագրվի, թե՛ մի հայր էլ ավելի խորը հոգեկան փրկման կհասցնենք նրան... Իմ կարծիքով, մեր երկրի պարագայում ներառական կրթության մասին խոսելն իմաստուն չէ (**պեդագոգական բուհի դասախոս, իգ.**):*

Ներառական կրթության խնդիրներին անդրադառնալիս՝ հարցվածների որոշ մասը (ադմինիստրացիայի 10 ներկայացուցիչներ) կարծում է, որ ներառական կրթության ծրագրերի ներդրման դաշտում այսօր ցայտուն դրական տեղաշարժեր են նկատվում: Սակայն, միևնույն ժամանակ, հարցվածների կողմից շեշտվում է, որ դրա գործնական կիրառությունն ապահովելու համար դեռևս լայնածավալ աշխատանքներ են պահանջվում: Այդ թվում՝

- ⇒ ֆիզիկական մատչելիության ապահովում,
- ⇒ կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ,
- ⇒ հասարակության վերաբերմունքի, հոգեբանական մթնոլորտի փոփոխում,
- ⇒ հանրության լայն շերտերի իրազեկում:

*...Ֆիզիկական կամ մեխանիկական պայմանների սրեղծման առումով աշխարհաքրայիքան էլ մեծ բարդություն չի ներկայացնում, սակայն դա պահանջում է որոշակի ֆինանսական ներդրումներ. աստիճանավանդակների վրա թեքահարթակների սրեղծում, վերելակների հարմարեցում, զուգարաններում համապարասխան պայմանների սրեղծում՝ լվացարաններ, բնակներ և այլն... Այսրեղ մեկ ուրիշ դժբախտություն կա, որ նոր շենքեր կառուցելիս՝ դրանց նախագծերում նշված պայմանները նախապես հաշվի չեն առնում, այսինքն ներառական կրթության ներկայացվող պահանջների մշակույթը ճարտարապետների կողմից դեռևս անսրեակում է **(ոչ պերական բուռի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.)**:*

*...Երբ հաշմանդամություն ունեցող ուսանողը գալիս է բուռ, իր տանից մինչև բուռ հասնելու ճանապարհին նա բախվում է մի շարք խնդիրների ու անհարմարությունների... Ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացում սա ևս կարևորագույն գործոն է, որին պերք է համընդհանուր լուծում տալ **(ոչ պերական բուռի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.)**:*

*...Կրթական ծրագրերի կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների առումով շարավելի դժվար է, քանի որ պահանջվում է յուրաքանչյուր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդու համար համապարասխան կրթական ծրագրի, մեթոդաբանական ցուցումների, տեխնիկական միջոցների ապահովում, հեռավար ուսուցման համակարգի ներդրում, դասագրքերի սրեղծում, ինչը ՀՀ-ում դեռևս լուծված չէ **(ոչ պերական բուռի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.)**:*

Այս գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է շահագրգիռ կողմերի՝ պետական մարմինների, մասնավոր ընկերությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, ԶԼՄ-ների, հասարակության անդամների փոխշահավետ համագործակցությամբ:

Հարցվածների գերակշռող մասը Հայաստանում ներառական կրթության թույլ զարգացվածության դրսևորումներից է համարել հասարակության չափից դուրս արտահայտված խղճահարական մոտեցումը, շեշտված ցուցադրական «բարություն անելը» հաշմանդամություն ունեցող մարդու հանդեպ, ինչպես նաև մատնացույց անելը, կատակի տակ թաքնված ծաղրանքը: Արդյունքում ստացվում է, որ ոչ միայն կրթական համակարգը, այլ հասարակությունն առհասարակ պատրաստ չէ ներառական կրթության ներդրմանը:

Բազմիցս կարծիքներ են հնչել, որ բարձրագույն կրթության ներառականության ապահովումը անհրաժեշտ է միայն հաշմանդամության որոշ տեսակներ ունեցող անձանց համար, մասնավորապես.

- ⇒ հենաշարժողական խնդիրներ ունեցողների, որոնց կրթություն ստանալը պայմանավորվում է միայն տեղաշարժման կամ հարմարեցման հիմնախնդիրների լուծմամբ,
- ⇒ լսողական ու տեսողական խնդիրներ ունեցողների, որոնց կրթություն ստանալը պայմանավորվում է հիմնականում նյութատեխնիկական բազայի համալրմամբ,
- ⇒ խոսքային խնդիրներ ունեցողների, որոնց կրթություն ստանալը պայմանավորվում է դասախոսական կազմի կողմից ուսումնական պահանջների նկատմամբ ճկունություն ցուցաբերելով:

Ըստ հարցվածների, բուռում բացառվում է մտավոր խնդիրներ ունեցողների ներառականության հարցը, իսկ ընդհանուր հաշմանդամություն ունեցող և հաշմանդամություն չունեցող ուսանողների կրթության կազմակերպումը իրարից ոչնչով չի տարբերվում:

Մոտեցումների այս պատկերը վկայում է, մի կողմից, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության և, մյուս կողմից, հաշմանդամության այլ տեսակներ ունեցող ուսանողների համար կրթության կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ թերի պատկերացումների մասին:



Ինչպես արդեն նշվեց, հասարակության վերաբերմունքի, հոգեբանական մթնոլորտի փոփոխման և հաշմանդամություն ունեցող անձանց ու նրանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ իրականացնելու, տեղեկատվություն տարածելու ուղղությամբ կարևորվում են համակարգված գործողությունների պլանավորումը և իրականացումը, քանի որ հասարակության մեջ երևույթների վերաբերյալ ինֆորմացիայի պակասի արդյունքում կարող է ձևավորվել ոչ համապատասխան վերաբերմունք և արձագանք:

*...Հիշում եմ, երբ 2001 թվականին պրակտիկայի էի գնում Վանաձորի հանրակրթական դպրոցներից մեկը, որտեղ ներառական կրթության համակարգն էր կիրառվում, մի մեծ խնդիր էր առաջացել: Ոչ հաշմանդամ երեխաների ծնողները իրենց երեխաներին հանում էին այդ դպրոցից և տեղափոխում այնպիսի դպրոցներ, որտեղ չկար ներառական կրթություն, քանի որ կարծում էին, որ իրենց երեխաներին կասեն, որ «էդ ձևիների» դպրոց են գնում ու վար աչքով կնայեն: Ծնողներն ավելի շատ էին շոկի մեջ, քան երեխաները, նրանք անընդհատ խղճում էին իրենց երեխաներին, իրենց թվում է, թե իրենց երեխաները, սովորելով հաշմանդամություն ունեցողների հետ, դառնալու են հաշմանդամ (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Ավելի շատ պիտի աշխատանք փարվի հանրության շրջանում, որպեսզի այդ «մեղքի զգացումը», խղճալու գաղափարը վերանս, որովհետև հաշմանդամին պիտի դիմել որպես լիարժեք քաղաքացի... Կարեկցանքը շատ լավ բան է, բայց պիտի լինի տեղին և ժամանակին, բոլոր դեպքերում շատ կարեկցելը կարող է ճնշող ազդեցություն ունենա (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

### **Հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ բուհերի աշխատելու պայրասարակամությունը**

Բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողների ներկայության վերաբերյալ միևնույն բուհը ներկայացնող երեք հարցվածները (2 դասախոս և 1 ադմինիստրացիայի ներկայացուցիչ) հաճախ հակասական պատասխաններ են տվել: Այս երևույթը կարող է պայմանավորված լինել հետևյալ գործոններով.

- ⇒ դասախոսները տեղյակ չեն բուհի այլ ֆակուլտետներում սովորող հաշմանդամություն ունեցող ուսանողների մասին,
- ⇒ համակարգված վիճակագրական տվյալներ չկան,
- ⇒ հաշմանդամության երրորդ խումբ ունեցող ուսանողները, որպես կանոն, նախընտրում են գաղտնի պահել իրենց հաշմանդամության փաստը, ավելին՝ խնդրում են բուհի վարչակազմին չհրապարակել այն՝ խուսափելով շրջապատողների անկանխատեսելի վերաբերմունքից:

*...Այն դեպքում, երբ ուսանողի հաշմանդամությունը չի երևում, շարերը չեն ցանկանում, որ մարդիկ իմանան այդ մասին: Օրինակ, մեր երկու ուսանողների ծնողները տարեսկզբին մուրեցան մեզ և խնդրեցին, որ այդ տեղեկությունը գաղտնի մնա: Մի կողմից, մենք պարտավոր ենք ապահովել գաղտնիությունը, իսկ մյուս կողմից, մենք պարտավոր ենք տարեսկզբին հանրությանը ներկայացվող ցուցակներում նշել ցածր բալերով անվճար ընդունվածների հիմքը (իսկ այդ երկու ուսանողները ցածր բալերով էին ընդունվել): Սակայն նրանց ծնողները ասեցին, որ եթե իրենց երեխաների անվան կողքը գրված լինի նրանց հաշմանդամության փաստի մասին, իրենք պարզապես դուրս կգան բուհից: Ամեն դեպքում մենք կարողացանք շրջանցել այդ փաստի հրապարակումը (միջպետական բուհի դասախոս, իգ.):*

Բուհերում հաշմանդամություն ունեցող ուսանողների մասին ավելի տեղեկացված են ադմինիստրացիայի ներկայացուցիչները, քանի որ նրանք են զբաղվում ուսանողների փաստաթղթերի, վճարների, զեղչերի հետ կապված խնդիրների կարգավորմամբ: Դասախոսները, որպես կանոն, ուսանողի հաշմանդամության մասին տեղեկանում են ինքնաբերաբար, ուսանողի հետ շփման, աշխատանքի ընթացքում. ադմինիստրացիան չի տեղեկացնում դասախոսին այդ մասին: Իսկ բուհերի ադմինիստրացիաների ներկայացուցիչները ուսանողների մոտ հաշմանդամության

առկայության հարցին անդրադառնում են հիմնականում վարձավճարների հավաքագրման կապակցությամբ: Բուհում այս կամ այն տեսակի առանձնահատկություններ ունեցող անձի մասին տեղեկությունը չի ստանում համապատասխան արձագանք՝ միջավայրի հարմարեցման և կրթական ծրագրերի համապատասխանեցման տեսքով: Միևնույն ժամանակ, բուհերի ադմինիստրացիայի ներկայացուցիչները կարևորեցին դասախոսի տեղեկացվածության խնդիրը՝ դասավանդվող կուրսում սովորող հաշմանդամություն ունեցող ուսանողի մասին՝ փաստելով հետևյալը.

*...Դասախոսը՝ որպես մանկավարժ, պետք է տեղյակ լինի տվյալ ուսանողի կյանքի որակի մասին: Չի բացառվում, որ այդ ուսանողը դասերի ժամանակ հաճախակի դուրս գալու կարիք ունի, կամ նրան անհրաժեշտ է հաց ուտել, ջուր խմել... Այս պարագայում կարելի է ասել, որ ներառական կրթությունը սկսում է գործել այն պահից, երբ մենք տեղյակ ենք լինում ուսանողի առանձնահատկությունների մասին (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

Խոսելով հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթության կազմակերպման մասին, հարցվածները շեշտեցին յուրաքանչյուրի հաշմանդամության խումբը, ֆիզիկական վիճակը և բուհի հնարավորությունները հաշվի առնելու կարևորությունը: Օրինակ, եթե ուսանողի մոտ խնդիրը ներքին օրգանների հետ է կապված և ֆիզիկական հարմարեցման կարիք չկա, ապա նրա կրթության կազմակերպումը չի տարբերվում մյուս ուսանողների կրթության կազմակերպումից:

Հարցվածներից 2-ը (մեկ պետական և մեկ ոչ պետական բուհի ներկայացուցիչ) վստահաբար բացատրեցին իրենց բուհում հաշմանդամություն ունեցող անձանց ուսանելու հնարավորությունը՝ իրենց դիրքորոշումը հիմնավորելով բուհի կրթական ուղղվածության առանձնահատկություններով: Հետաքրքրական է այն, որ նշված պետական բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողներ, այնուամենայնիվ, սովորում են:

Հարցված դասախոսներից 7-ը որոշակի վերապահումներով են մոտեցել այս կամ այն բուհի որևէ ֆակուլտետում հաշմանդամություն ունեցող անձանց ուսանելու հանգամանքին: Ոմանք նշել են, որ հատկապես առողջապահական, բժշկական ոլորտում կան մասնագիտություններ և աշխատատեղեր, որոնք «թույլատրելի չէ», որ կատարեն հաշմանդամություն ունեցող անձինք՝ օրինակ բերելով վիրաբույժի աշխատանքային առանձնահատկությունները: Ոմանք նաև կարծիք արտահայտեցին, որ ֆիզիկական ու հուզական կայուն վիճակ պահանջող մասնագիտությունների պարագայում, դարձյալ «թույլատրելի չէ» հաշմանդամություն ունեցող ուսանողների ներգրավումը:

*...Մարդիկ բժշկի մոտ այցելելիս՝ նրա մեջ գրեթե Աստված են փնտրում, ուստի բժիշկը հատկապես իր արտաքին տեսքով և խոսքով պետք է իդեալական լինի, որպեսզի վստահություն ներշնչի հիվանդին: Դրանից բացի, վիրաբույժը պատրաստ է մի քանի ժամ շարունակ անցկացնում է վիրահատարանում, ինչը լրացուցիչ ֆիզիկական գերլարվածություն է պահանջում, սակայն դժվար թե հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանան սրանձնել այդ ծանր գործը (պետական բուհի դասախոս, ար.):*

*...Բարձրագույն կրթության մեջ էլ պետք է հասկանանք, թե որ մասնագիտություններն են հնարավոր հաշմանդամություն ունեցող ուսանողների համար, որոնք՝ ոչ: Իմ կարծիքով, օրինակ, սոցիալական աշխատողի մասնագիտությամբ չի կարող սովորել հաշմանդամություն ունեցող մարդը, քանի որ նա պետք է ունենա ֆիզիկական ու էմոցիոնալ կայուն վիճակ, քանի որ հազար ու մի խոցելի խմբերի հետ է աշխատելու (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Լսողության խնդիրներ ունեցող մարդիկ երաժշտության բնագավառում չեն կարող ուսանել (պետական բուհի դասախոս, իգ.):*

Պատասխանների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հարցվածների մի մասը նեղ պատկերացում ունի հաշմանդամության երևույթի բազմազանության վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, հետազոտության ընթացքում հարցվողները հաշմանդամություն ունեցող ուսանողների կարիքներին կրթական միջավայրը և ընթացակարգերը հարմարեցնելու տարբեր օրինակներ բերեցին: Օրինակ՝ կատարողական արվեստ ուսանող տեսողական խնդիր-

ներ ունեցողների համար Բրայլյան համակարգի բացակայության պատճառով դասախոսներն այլընտրանքային մոտեցում են ցուցաբերում. Դասախոսն ինքն է կարդում նոտաները, որպեսզի ուսանողը մշակի իր ձայնը:

Պետական մեկ այլ բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողն ինքն է որոշում իր կրթության կազմակերպման ձևը. օրինակ, կույր ուսանողները ընտրում են ձայնագրող սարքից օգտվելու տարբերակը, իսկ այն ուսանողները, ովքեր դժվարանում են հաճախակիորեն այցելել բուհ, օգտվում են առցանց կրթության հնարավորությունից:

Ոչ պետական բուհերից մեկում հենաշարժողական խնդիր ունեցող ուսանողը լսարանում իր սեփական, հատուկ հարմարեցված աթոռն ունի, քանի որ ուսանողական նստարանին նստելը խնդրահարույց է, ելնելով հաշմանդամության առանձնահատկություններից:

Պետական բուհերից մեկում սովորող լսողության խնդիր ունեցող ուսանողի հետ աշխատանքում դասախոսները կիրառում են դասավանդման տարաբնույթ ձևաչափեր՝ գրատախտակ, բանավոր խոսք, դիմախաղ, ժեստեր, համակարգիչ: Արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար ուսանողին դիմելիս դասախոսը ուղղակիորեն նայում է նրա դեմքին, օգտագործում է բերանի արտահայտիչ շարժումներ և ձայնի հատուկ հնչերանգ:

Ոչ պետական բուհերից մեկում սովորող կույր ուսանողի ուսումնաստության գործընթացում պահանջվում է լրացուցիչ տեխնիկա, տեխնոլոգիական բազա, որը բուհը փորձում է ապահովել իր ուժերով:

Մարզում գտնվող ոչ պետական բուհերից մեկում լսարանում նստարանի ընտրությունը թողնում են հաշմանդամություն ունեցող ուսանողների նախապատվությանը, իսկ անհրաժեշտության դեպքում դասախոսները հանգստանալու հնարավորություն են ընձեռում: Երբ ուսանողն օգտվում է առողջարաններում գտնվելու իր արտոնությունից, այնտեղ գտնվելու ժամանակահատվածը բուհը չի դիտում որպես անհարգելի բացակայություն, և բացթողած նյութը լրացվում է անհատական, արտալսարանային պարապմունքների, անհատական հանձնարարությունների միջոցով:

Չնայած բուհերի կողմից ուսումնական գործընթացի հարմարեցման որոշակի փորձերի, բոլոր 29 բուհերից միայն մեկում Հայաստանի ամերիկյան համալսարանում է գործում հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթության կազմակերպման հատուկ ընթացակարգ: Իսկ ոչ պետական բուհերից մեկում հարցման պահին ադմինիստրացիայի ներկայացուցիչը ներկայացրել է փաստաթղթի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ խիստ կարևորելով այն:

*...Եթե ուսանողը ցանկություն է հայտնում, որ համալսարանի ղեկավարությունը իմանա իր հաշմանդամության մասին, ապա նա լրացնում է մի հարցաթերթ, որտեղ նկարագրում է իր խնդիրը և հանձնում է ուսանողության հարցերով կենտրոնի համակարգողին: Այնուհետև փոխադրվում է ուսանողը հանդիպում է համակարգողի հետ, միասին քննարկում են բոլոր կետերը, որից հետո համակարգողը ներկայանում է ուսանողի հետ աշխատող կամ աշխատելիք դասախոսներին և մշակվում է որևէ մոտեցում, որը կրի իր ուսանողի շահերից: Այս ամենը ապահովվում է գաղտնիության սկզբունքի պահպանմամբ (միջպետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

Տեղեկատվության հավաքագրման և դրա կիրառման այս մոտեցումը կարելի է օրինակելի համարել, քանի որ այն հնարավորություն է տալիս բուհին արդյունավետորեն կազմակերպել հաշմանդամություն ունեցող ուսանողի կրթությունը, հաշվի առնելով նրա անհատական կարիքներն ու առանձնահատկությունները և միաժամանակ պահպանելով գաղտնիության սկզբունքները:

Մյուս բուհերի հարցվածների կեսից ավելին ևս կարևորել են փաստաթղթի ստեղծման անհրաժեշտությունը՝ անկախ նրանից, իրենց բուհում կան հաշմանդամություն ունեցող ուսանողներ, թե ոչ:

*...Մշակված հարուկ ընթացակարգ չունենք, սակայն պետք է մշակել, թեկուզ մեկ ուսանողի դեպքում, քանի որ իր շահերի պաշտպանության համար այդ փաստաթուղթը պարզապես անհրաժեշտություն է (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*



*...Կարծում եմ, նման փաստաթղթի մշակման կարիքը կա, որովհետև ներառական կրթությունը արդեն բավական երկար պատմություն ունի Հայաստանում, և գնալով բուհ մուտք գործող հաշմանդամների թիվը կավելանա, հետևաբար նման ընթացակարգ ունենալն անհրաժեշտություն է (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

Հարցվածներից 10-ը հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթության կազմակերպման վերաբերյալ հատուկ ընթացակարգի ստեղծումը դիտարկել են որպես անհրաժեշտություն միայն հաշմանդամություն ունեցող ուսանողների բուհ ընդունելության պայմանում:

*...Քանի որ քիչ են մեզ մուտք դիմում հաշմանդամություն ունեցող մարդիկ, ու որպես կանոն նրանք շատ ծանր հաշմանդամություն չեն ունենում... միգրացիոն հետազոտում դա անհրաժեշտ չի... այս պահին չեմ տեսնում հատուկ ընթացակարգի ստեղծման կարիք (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

*...Հատուկ ընթացակարգ չունենք, միգրացիոն այն պատճառով, որ դրա կարիքը չունենք, բնականաբար, հենց կարիքը զգանք, անմիջապես այդ կարգը կընդունենք, դա խնդիր չէ (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

*...Եթե շատ հաշմանդամ ուսանողներ ունենանք, երևի ընթացակարգն էլ կստեղծվի (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Մեր ուսանողների կոնսիստենցիայի պարագայում հատուկ ընթացակարգի կարիք չկա: Միգրացիոն եթե լինեն բարդ հաշմանդամության տեսակներով ուսանողներ, կարիքը ստեղծվի (միջպետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

Մյուս կողմից, մի շարք պետական ու ոչ պետական բուհերի հարցվածներ առհասարակ դեմ են արտահայտվել հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթության կազմակերպման հատուկ ընթացակարգի ստեղծմանը, այն համարելով հաշմանդամություն ունեցող ուսանողների հանդեպ խտրականության դրսևորում:

*...Չունենք հատուկ ընթացակարգ, կարիքը չի էլ եղել, քանի որ դա կնշանակի, որ տարբերակում ենք դեմ կրթության մեջ: Մենք չենք գրնում, որ դա ճիշտ է: Դրանից բացի, բուհի հնարավորությունները այնքան մեծ չեն, որ այն կարողանա հատուկ կրթություն կազմակերպել (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

*...Մենք այդ փաստաթուղթը չունենք, քանի որ մենք ուսանողների տարանջատում չենք անում, կարիքն էլ չեմ տեսնում (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթական պայմանները, նախատեսվող արտոնություններն ու աջակցության ձևաչափերը կախված են բուհի տեսակից (պետական, ոչ պետական կամ միջպետական): Պետական և միջպետական բոլոր բուհերում գործում է միևնույն մոտեցումը՝ ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած՝ հաշմանդամության 1-ին և 2-րդ խումբ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն ուսումնական հաստատության անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար նվազագույն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

ԵՊՀ-ում երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող ուսանողները ստանում են ուսման վարձի գեղչ, ավելին, նրանց համար գործում են նաև կրթաթոշակներ: ԵՊՀ-ի ուսանողական խորհրդի միջոցով հավաքագրվում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպիսի խնդիրներ կան հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթական գործընթացում, ապա ցուցաբերվում է համապատասխան աջակցություն: Համանման սկզբունքով աշխատում է նաև ՃՀՀԱ-ն: Վարձավճարների գեղչային համակարգից օգտվում են նաև ԵՊԿ-ում սովորող երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող ուսանողները՝ անկախ իրենց միջին գնահատականից:

ԵՊՀ-ն իր ֆոնդից, հնարավորության սահմաններում, հաշմանդամություն ունեցող ուսանողներին տրամադրում է դրամական օգնություն: ԵՊԿ-ում, եթե հաշմանդամություն ունեցող ուսանողը վատառողջ լինելու պատճառով չի ներկայանում քննություններին կամ ստուգարքներին, ապա բուհի ղեկավարությունը քննության կամ ստուգարքի լրացուցիչ օր է նշանակում:

ՀՊՄՀ-ի կամավորները կույր ուսանողներին օգնում են տեղաշարժվել շենքում: Իսկ լեհ գործընկերների հետ համագործակցության շնորհիվ բուհի ադմինիստրացիան պատրաստվում է բոլոր մասնաշենքերի դռների բռնակների վերևի հատվածում Բրայյան ձևաչափով տեղեկատվություն տեղադրել դասասենյակի անվանման և լսարանի համարի վերաբերյալ: Բացի այդ, տեսողության խնդիրներ ունեցող ուսանողների համար շենքի միջանցքներում աստիճանները դեղին եզրագծում ունեն, իսկ լսողության խնդիրներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտության դեպքում իրականացվում է սուրդոթարգմանություն:

Ոչ պետական բուհերում հաշմանդամություն ունեցող ուսանողների համար կիրառվում է ուսման վարձի զեղչ 20-50%-ի չափով, տրամադրվում են նաև կրթաթոշակներ: Իսկ, օրինակ, Երևանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում հաշմանդամություն ունեցող ուսանողները սովորում են անվճար համակարգում: «Մխիթար Գոշ» միջազգային համալսարանի Վանաձորի մասնաճյուղը համագործակցում է միջազգային կազմակերպության հետ, որի շնորհիվ, հաշմանդամության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, վարձը զեղչվում է 40%-ով:

Երևանի «Եվրասիա» միջազգային համալսարանի հաշմանդամություն ունեցող ուսանողները օգտվում են հեռավար ուսուցման համակարգից, ինչը, ըստ բուհի ներկայացուցիչների, շատ է հեշտացնում նրանց ուսուցման գործընթացը: Բացի այդ, բուհի կողմից հատկացված հատուկ մասնագետը ուղեկցում է անվասայլակով տեղաշարժող ուսանողին:

Երևանի գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիան Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ աջակցում են հաշմանդամություն ունեցող ուսանողներին. վարձավճարի 60%-ը վճարում է քաղաքապետարանը, 30%-ը՝ բուհը, և միայն 10%-ը՝ ուսանողները:

***Հաշմանդամություն ունեցող ուսանողների համար բուհերի ֆիզիկական մատչելիության և ուսումնական գործընթացում ներգրավված կողմերի փոխհարաբերությունների վերաբերյալ դիրքորոշումները***

Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ աշխատելու փորձին և առկա դժվարություններին՝ հարցվածները նշեցին, որ բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողները հաշմանդամություն չունեցող ուսանողների, ադմինիստրացիայի, դասախոսների հետ փոխհարաբերությունների ընթացքում չեն բախվում որևէ դժվարությունների, քանի որ.

- ⇒ բուհում արդեն իսկ չափահաս ու կրթված անձինք են սովորում,
- ⇒ բուհի անձնակազմը բավական ուշադիր է բոլոր ուսանողների և հատկապես՝ հաշմանդամություն ունեցող ուսանողների նկատմամբ,
- ⇒ հաշմանդամություն չունեցող ուսանողները հաշմանդամություն ունեցող ուսանողների հանդեպ ցուցաբերում են հոգատարություն և զգուշավորություն:

*...Ունենք ուսանողներ, որոք տեղաշարժվելու խնդիր ունեն: Միշտ տեսնում եմ, որ նրա կուրսընկերները նրան գրեթե գրկած տանում-բերում են: Նրանք պարտավոր չեն, բայց հպարտությամբ նրան օգնում են (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Ես 28 տարվա մեջ ամեն ինչ տեսել եմ, բացի նրանից, որ որևէ մի հաշմանդամ երեխա, բացի ջերմ խոսքերից և վերաբերմունքից, այլ բանի արժանանա (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իզ.):*

*...Ես սկզբից զարմացա, երբ մեր ուսանողները լավ ընդունեցին հաշմանդամ ուսանողներին, անգամ զգում եմ, որ արդեն ընկերություն ու մրերություն են անում: Մի անգամ լսարանում ուզում էի հասկանալ, թե ինչ է ասում այդ խոյ ու համր ուսանողը, և ինձ օգնության հասավ նույն կուրսից մեկ այլ ուսանող, որը ինձ սկսեց բացատրել այդ հաշմանդամ ուսանողի ասածը (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Սա դարձեց չէ, այլ բուհ է. այստեղ չափահաս ուսանողները ըմբռնումով են մոտենում նման մարդկանց: Հաշմանդամ ուսանողները, որոնք ունեն հենաշարժողական խնդիրներ, կարող են ուշանալ, բացակայել դասերից, բայց ոչ մի դեպքում ոչ հաշմանդամ ուսանողները իրենց չեն համեմատում նրանց հետ: Դեռ առաջին կուրսերում կուրսդեկերի*

խնդիրն է ուսանողների հետ բացատրական աշխատանքներ փունել (առանց հաշմանդամ ուսանողների ներկայության), որ երբեք չպետք է հաշմանդամ ուսանողին դարձնել ծաղրի առարկա, քանի որ նա կարող է վիրավորվել ու հաշորդ օրը դասին չներկայանալ: Բացի դրանից, մեր առաջնային խնդիրը նաև այն է, որ կարեկցանք չառաջանա, որ նա չգգա, որ ինչ-որ բանով առանձնանում է ոչ հաշմանդամ ուսանողներից: Մարդն իր արարքը չպետք է կրի որպես հավերժական բան, այլ պետք է մրաժի, որ ինքը սովորական երեխա է: Միայն այս դեպքում ինտեգրման գործընթացը կհաջողվի **(ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.)**:

Այնուամենայնիվ, հարցված 7 դասախոսներ կարծիք են հայտնել, որ եթե անգամ ուսանողների փոխհարաբերություններում որոշակի տարաձայնություններ առաջանան, խնդիրները կարելի է հաղթահարել անմիջապես ուսանողների հետ զրուցելու, նրանց հետ բացատրական աշխատանքներ տանելու միջոցով:

...Մենք միշտ զգուշացնում ենք ուսանողական խորհրդին, որ նրանք փարբերություն չդնեն ուսանողների միջև միջոցառումների կազմակերպման հարցում... Այս և այլ բաները մեր կողմից վերահսկվում են, որպեսզի որևէ դժվարություն չառաջանա նրանց փոխհարաբերությունների մեջ **(ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.)**:

...Ցանկացած դասախոս մի որոշ ժամանակ պետք է նվիրի լսարանին, որոշակի պարզաբանումներ փայտվ, թե ինչպես պետք է վարվել հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ **(ոչ պետական բուհի դասախոս, ար.)**:

...Եթե դասախոսների հետ փոխհարաբերություններում լինեն խնդիրներ, ապա դրա պարճառը ուսանողի հաշմանդամությունը չէ: Որևէ խնդիր չունեցող ուսանողի հետ էլ կարող է կոնֆլիկտ, անհամաձայնություն լինել: Եթե ասենք, որ նա հաշմանդամ է, ու նրան ասեն ինչ կարելի է, ճիշտ չի լինի: Ես պետք է իրեն գգա հավասարի իրավունքով: Ինչ խոսք, սովորական ուսանողներից մի քիչ ավելի նրբանկար պետք է լինել հաշմանդամություն ունեցող ուսանողների հանդեպ **(պետական բուհի դասախոս, իգ.)**:

Հատկանշական է, որ բուհերի 4 դասախոսներ հաշմանդամություն ունեցող ուսանողների և համակուրսեցիների կամ դասախոսական կազմի հետ փոխհարաբերություններում հնարավոր դժվարությունները կապել են, ընդհանուր առմամբ, հասարակության մեջ առկա վերաբերմունքով՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց հիմնահարցերի վերաբերյալ տեղեկատվության պակասով:

...Ուսանողը դեռ պատրաստ չէ իր կողքին փեսնելու հաշմանդամություն ունեցող մարդու, և այդ դժվարությունը միայն փարիների ընթացքում կհաղթահարվի, երբ որ մարդկանց մրաժեղակերպը փոխվի հաշմանդամների մասին **(ոչ պետական բուհի դասախոս, իգ.)**:

...Մարդիկ տեղեկացված չեն, քանի որ հատուկ կարիքներ ունեցող մարդիկ մեր հասարակության լիարժեք մաս չեն կազմում, այսինքն՝ սովորական մասնակից չեն, այլ արտաոց մի բան են, որի հետ մյուսները դեռ շփվելու փորձ չունեն: Ես կարծում եմ, որ այդ հարցի լուծումը մարդկանց կրթելն է և հատուկ կարիքներով մարդկանց հասարակության մաս դարձնելը **(միջպետական բուհի դասախոս, ար.)**:

Խորին հարցազրույցների ընթացքում ուսումնասիրելով հաշմանդամություն ունեցող անձանց համար բուհի ֆիզիկական մատչելիության հարցը (շենքի մուտք, թեքահարթակ, մուտքի դուռ, դասասենյակ/լսարան, սեղաններ, ճաշարան, սանհանգույց և այլն)՝ պարզվեց, որ մասնավոր դեպքերում բուհի մատչելիությունը սահմանափակվում է մուտքի թեքահարթակի և վերելակի առկայությամբ: Հիմնականում բոլոր հարցվածները նշել են, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց բուհերի ֆիզիկական մատչելիությունն ապահովված չէ՝ ներկայացնելով հետևյալ պատճառները.

- ⇒ բուհերի՝ դեռևս խորհրդային միության տարիներին կառուցված, չհարմարեցված շենքեր,
- ⇒ հաշմանդամություն ունեցող ուսանողների բացակայություն,
- ⇒ հաշմանդամության այնպիսի տեսակներ ունեցող ուսանողների բացակայություն, որոնց համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ,
- ⇒ ֆինանսական միջոցների սղություն:

*...Մեր բուհը ոչ մի առումով հարմարեցված չէ՝ ոչ դռները, ոչ մուտքը, որ աստիճանները... Եթե լինեն նման ուսանողներ, միգուցե ինչ-որ բան նախաձեռնենք (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

*Բուհի հարմարեցումը մեծ ֆինանսների հետ է կապված և երկարատև պրոցես է: Եթե չեմ սխալվում, մեր ուսումնական ծրագրում առաջիկա 4 տարիներին այդ խնդրին չենք անդրադառնալու (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Մեկ կամ երկու ուսանողի համար մեծ փոփոխություններ կարարելը իմաստ չունի, մանավանդ: Բացի այդ, այս շենքը բուհի սեփականությունն է: Եթե լինեք պետական կառույց, արդեն պետության կողմից կնախագծվեք շենքը և հաշմանդամություն ունեցողների պահանջներին կհամապատասխանեցվեք: Բայց քանի որ սա մասնավոր հասարակություն է, բնականաբար, ոչ մի սեփականատեր չի ցանկանա փող ծախսել մեկ կամ երկու հոգու համար: Ցավով եմ ասում, բայց այդպես է (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Հենց այնպես սարքեր պահեստավորելը կամ այլընտրանքային ծրագիր ունենալը խելամիտ չէ, այ անհրաժեշտության դեպքում պետք է նախաձեռնել այդ ամենը: Չեմ կարծում, որ ենթադրելով, թե մի օր կունենանք հաշմանդամ ուսանող, կարիք կա նախապես ունենալ այդ ամենը, չէ՞ որ դա մեծ ներդրումների հետ է կապված (միջպետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

Բացառություն են կազմել Երևանի «Եվրասիա» միջազգային համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի ներկայացուցիչների պատասխանները, քանի որ առաջին դեպքում բացի թեքահարթակից ու հարմարավետ վերելակից, զուգարաններում, լսարաններում, գրադարանում և ուսումնական մասնաշենքում ևս ստեղծած են անհրաժեշտ պայմանները, իսկ երկրորդ դեպքում՝ ֆիզիկական մատչելիությունն ավելի շատ ապահովված է լսարաններում, գրադարանում, միջանցքներում, մասնաճյուղից մասնաճյուղ տեղափոխվելիս, ինչպես նաև վերելակի և մուտքի դռան հարցում:

Բուհերի դասախոսական և ադմինիստրատիվ կազմի գնահատականները համընկնում են ֆիզիկական մատչելիության փաստացի դիտարկման արդյունքների հետ:

### ***Հաշմանդամություն ունեցող ուսանողների համար կրթական ծրագրերի մատչելիությունը***

Ներառական բարձրագույն կրթության կարևորագույն բաղադրիչ է ուսումնական, կրթական ծրագրերի մատչելիությունը, որը ենթադրում է ակադեմիական ծրագրի հարմարեցում, դասավանդման և գնահատման մեթոդների բազմազանություն, այլընտրանքային գնահատման մեխանիզմների առկայություն, ուսումնական ծրագրերի ճկունություն, հատուկ տեխնոլոգիաների կիրառում, առցանց ուսանելու հնարավորություններ և այլն:

Հարցվածները նշել են, որ ուսումնական և կրթական ծրագրերի մատչելիությունը ապահովված է հաշմանդամություն ունեցող ուսանողների համար: Իրականում, կրթական ծրագրերը բոլոր ուսանողների համար նույնն են, անկախ նրանից՝ ուսանողը ունի հաշմանդամություն, թե ոչ: Իսկ հաշմանդամություն ունեցող ուսանողի կրթական գործընթացի հետ կապված առաջացող խնդիրները ստանում են իրավիճակային և ինքնաբերական լուծումներ, հիմնականում դասախոսի կողմից դասավանդման մեթոդների ճկունության և բարի կամքի ցուցաբերման արդյունքում: Օրինակ, որոշակի դեպքերում կիրառվում է ուսման առցանց հնարավորություն և կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ: Հարցվածների կարծիքով, դրանում է կայանում դասախոսի դերը բուհը հաշմանդամություն ունեցող ուսանողների համար մատչելի և ներառական դարձնելու հարցում:

Այսպիսով, բուհերը չունեն հաշմանդամ ուսանողների հետ աշխատելու հստակ մոտեցում և հայեցակարգ, որի արդյունքում հարցվածների կարծիքներն այսքան բազմազան են. մի մասը հայտնում է ցանկացած տեսակի հարմարեցում կատարելու պատրաստակամություն, այնինչ մյուսները հակված չեն նման ճկունության:

*...Բուհի կրթական ծրագրերը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան են կազմված, որով նախադրեցված չեն առանձնահատկություններ հաշմանդամների համար: Ուղղակի նրանց հետ աշխատելու համար մեթոդական այլ ուղղություններ ենք փնտրում, որպեսզի կրթական չափորոշիչներով պահանջվող մակարդակը ապա-*



*հովվի: Այսինքն՝ հաշմանդամ ուսանողներին պետք է հարմարեցնել կրթական մրջափայրին (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Չեմ կարծում, որ ուսումնական ծրագրերի վերանշակման կարիք կա, քանի որ որակավորում, մասնագիտություն ունենալու համար հաշմանդամություն ունեցող անձը պետք է յուրացնի նույն ուսումնական ծրագիրը, որն առաջարկում է բուհը, հակառակ դեպքում նա լավ մասնագետ չի դառնա: Այլ բան է, եթե մարդը չի կարողանում խոսքով արտահայտի իր սասածը, արտահայտում է գրավոր կերպով: Բայց եթե հաշմանդամը չի կարողանում գիրելիքների նախարեսված մասշտաբը յուրացնել, ապա անհիմաստ է նրա բուհում սովորելը, ավելի լավ է արհեստ սովորի (միջպետական բուհի դասախոս, իգ.):*

*...Հաշմանդամ ուսանողին պետք է շար ժամանակ հարկացնել, բացառել, իսկ եթե նա չի կարող հաճախել բուհ, օն-լայն ենք կազմակերպում դասախոսությունը, որպեսզի նա փանր սովորի և լիարժեք կարարի հանձնարարությունները, եթե գրականության կարիք է ունենում, փայխ ենք էլեկտրոնային գրականություն կամ դասախոսությունների ցիկ (ոչ պետական բուհի դասախոս, ար.):*

*...Եթե մեր բուհում լինեն հաշմանդամություն ունեցող ուսանողներ, մենք հարուկ ծրագիր կմշակենք թե՛ գնահատման, թե՛ քննությունների անցկացման համար: Կարծում եմ, դա կարևոր է (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Կրթական ծրագրերը մարչելի դարձնելու համար ուսանողների հաշմանդամության խումբն էլ նշանակություն ունի, տեսակն էլ... Բնչպե՛ս է հնարավոր միևնույն ծրագիրն իրականացնել նույն լսարանում սովորող խուլ, կույր և ֆիզիկական խնդիրներ ունեցող ուսանողների հեյր... Քանի տեսակի առողջական խնդիր ունեցող ունենք լսարանում, այդքան ծրագիր է պետք (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

Այսպիսով, կարելի է ասել, որ կրթական ծրագրերի մատչելիություն ասելով հարցվածների մի մասը հասկանում է լիովին առանձնացված, հատուկ ծրագիր հաշմանդամություն ունեցող ուսանողների համար: Նման թյուր պատկերացման արդյունքում մատչելի ծրագրերի ստեղծումը դիտարկվում է որպես խտրականության դրսևորում: Իրականում, ներառական կրթական ծրագիրը ենթադրում է համընդհանուր կիրառելիություն և հիմնված է ճկուն և անհատական մոտեցման, դասավանդման մեթոդների և ուսումնական նյութերի ու դրանց մատուցման ձևաչափերի բազմազանության վրա:

### ***Բուհերի ներառականության ապահովմանն ուղղված միջոցառումներ***

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար կարևոր է հարցվածների տեսակետը հաշմանդամություն ունեցող ուսանողների հանդեպ կիրառվող ուսումնական պահանջների վերաբերյալ (մասնակցություն, քննություններ, ակտիվություն և այլն): Հետազոտության ընթացքում բուհերի դասախոսներն ու ադմինիստրացիաների ներկայացուցիչներն այս հարցում տարբեր, երբեմն հակասող կարծիքներ են հայտնել: Ոմանք գտնում են, որ բոլոր ուսումնական պահանջները պետք է նույնը լինեն բոլոր ուսանողների համար, քանի որ տարբերությունը կնշանակի խտրականության և տարբերակում, մյուսների կարծիքով՝ հաշմանդամություն ունեցող ուսանողների ուսումնական պահանջներին պետք է վերապահումով մոտենալ, քանի որ կախված հաշմանդամության խմբից և տեսակից՝ հնարավոր է, որ ուսանողները ետ ման կրթական գործընթացից:

*...Ուսումնական պահանջները նույնը պետք է լինեն բոլորի համար, որովհետև մենք չենք փարանջարում ուսանողներին, մենք նույն ուսուցումն ենք իրականացնում, նույն որակավորումն ենք փայխ... նույն հաշմանդամը կարող է լավ փնրեսագետ էլ լինի, լավ իրավաբան էլ լինել, լավ ֆիզիկոս էլ լինի: Ուսրի ճիշտ չէ փարանջարում դնելը (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Պահանջներում ոչ մի փարբերություն էլ պետք չէ կիրառել, պետք է վերաբերվել ինչպես հավասարը՝ հավասարին: Միակ արբոնությունը, որ պետք է ունենա հաշմանդամություն ունեցող ուսանողը, դա ուսման զեղչերն են, ուրիշ ոչ մի բան (պետական բուհի դասախոս, ար.):*

...Հաշմանդամների՝ դասերին մասնակցելու, քննություններին պարտասուրվելու մեթոդները պարտադիր պետք է լինեն փարբեր: Երանց հետ սրուգումներ կարելի է անցկացնել, ուսուցման բազմաթիվ ձևեր կան, որոնք փարբերվում են լսարանային պարասպմունքներից (ռեֆերատ, էսսե, սրուգողական, արեղծագործական աշխատանք), և դրանք բոլորը կիրառելի են, առաջին հերթին, կրթության հասրուկ կարիք ունեցող անձանց համար (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):

...Երանց ակտիվության, մասնակցության հարցը պիտի որոշի բժշկական հանձնաժողովը, համաձայն որի որոշման հարակեցվում է, թե հաշմանդամության փվյալ կարգն ունեցողին ինչ աշխատանք չի կարելի իրականացնել՝ ինչ ծանրաբեռնվածությամբ, ինչ ծավալով (պետական բուհի <sup>ադմինիստրացիայի</sup> ներկայացուցիչ, իգ.):

...Հաշմանդամություն ունեցող ուսանողի գնահատման կամ մասնակցության հարցում փարբերությունը կախված է հաշմանդամության աստիճանից, չի բացառվում, որ կլինեն նյութեր, որոնք իրենք լավ չեն հասկանա (ոչ պետական բուհի դասախոս, ար.):

...Գիտելիքներ փայլու և դրանք սրուգելու առումով ոչ մի փարբերություն պետք չէ դնել, քանի որ մենք, փայլով գիտելիք, պահանջում ենք որակ: Բայց առանձին դեպքերում, եթե դա լինի կոյր երեխա, ապա նրա համար առանձին քննություն կազմակերպելը պետք է փոխարինվի այլ ձևով... Չեմ կարծում, որ արտոնություններ պետք են հաշմանդամներին, մենք դրանով կշեշտենք նրանց վիճակը (միջպետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):

Մի խումբ դասախոսների կարծիքով հաշմանդամություն ունեցող ուսանողի հետ աշխատանքում էական առանձնահատկություններ չկան. դասախոսը, հաշմանդամություն ունեցող ուսանողի հետ աշխատելիս, կարող է բախվել այն նույն խնդիրներին, որոնց բախվում է հաշմանդամություն չունեցող ուսանողի հետ աշխատանքի ընթացքում:

...Դասախոսը կարող է ունենալ նույն բարդություններն ու խնդիրները և՛ հաշմանդամի, և՛ ոչ հաշմանդամի հետ շփվելիս: Պետք է գիտակցել, որ կա ուսանողին կրթելու, դաստիարակելու, մասնագետ դարձնելու պարտավորություն (ոչ պետական բուհի դասախոս, իգ.):

...Կարծում եմ, որ հնարավոր խնդիրները կախված են դասախոսի մարդկային որակներից, նրա պրոֆեսիոնալիզմից, նրա մանկավարժ լինելուց... (ոչ պետական բուհի դասախոս, իգ.):

Հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ աշխատանքի փորձ ունեցող դասախոսների կարծիքի հիման վրա հնարավոր դարձավ առանձնացնել մի շարք դժվարություններ, որոնց նրանք կարող են բախվել, մասնավորապես.

- ⇒ տեխնիկական հարմարությունների և պայմանների բացակայություն, որի պատճառով դասախոսը չի կարող տեսողության և լսողության խնդիրներ ունեցողների հետ աշխատել այնպես, որ մատուցվող նյութը լինի հասանելի և մատչելի.
- ⇒ հաշմանդամություն ունեցող ուսանողի հետ աշխատելու փորձի և հմտությունների պակասը.
- ⇒ անհատական մոտեցման գաղափարի երկակի ընկալումը. ոմանք այն դիտարկում են որպես խտրականություն, ոմանք՝ որպես անհրաժեշտություն յուրաքանչյուր անձի հետ աշխատելիս.
- ⇒ հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելու և նրանց մասին խոսելու համար համապատասխան եզրույթային բազայի անկատարությունը.
- ⇒ այն հույզերն ու վերաբերմունքը, որոնք կարող են խանգարել դասախոսին աշխատել անաչտ և արդյունավետ, օրինակ՝ խղճահարության զգացում հաշմանդամություն ունեցող ուսանողի նկատմամբ.
- ⇒ հաշմանդամություն ունեցող ուսանողի հետ աշխատելու պատրաստակամության և համբերության բացակայությունը:

⇒ ...Հաղորդակցման դժվարություններ կարող են լինել, օրինակ, լսողության խանգարում ունեցողների հետ աշխատանքում, քանի որ նյութի մատուցումը հաստատ դժվարություններ կառաջացնի... Նաև դասախոսի կողմից հոգեբանական ճիշտ մոտեցում ցուցաբերելու կարիք կլինի, որովհետև այստեղ խղճալու և հարգելու սահմանը պետք է դասախոսը ճիշտ կարգավորի (պետական բուհի դասախոս, իգ.):

*...Հիմնական խնդիրը համապատասխան մեթոդական բազայով զինված չլինելն է, այդ բազմաթիվ մեթոդներն արդյունավետորեն կիրառելու ունակություններ չունենալը, դրա համար դասախոսները պետք է վերապատրաստվեն, դասավանդման նոր տեխնոլոգիաներին ծանոթանան... Մենք նրանց մասնագիտական առաջխաղացմանը նպաստող քաղաքականություն ենք վարում, որ նմանատիպ հարցերում պրոբլեմներ չլինեն (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

Նման կարծիքները վկայում են, որ հարցվածների մի մասը ներառական կրթության խնդիրները կապում են ոչ թե ուսանողների հաշմանդամության, այլ համապատասխան պայմանների բացակայության, մեթոդական բազայով զինված չլինելու, նոր տեխնոլոգիաներին և դրանց կիրառմանը ծանոթ լինելու, ինչպես նաև հատուկ վերապատրաստման անհրաժեշտության հետ:

*...Բնականաբար, այս աշխատանքը փարբերվում է ոչ հաշմանդամ ուսանողի հետ աշխատանքից: Պետք է այնքան սիրել այդ աշխատանքը, որ դասախոսի համար փարբերություն չլինի՝ դիմացինը հաշմանդամություն ունի, թե ոչ (ոչ պետական բուհի դասախոս, ար.):*

*...Դասախոսը պետք է փրկապետի իր էմոցիաներին: Դասախոսը կարող է մտածել, որ ուսանողը հաշմանդամ է, ուսուցիչ պետք է նրան «լավության կարգով» գնահատական դնել և չքննի այնպես, ինչպես պահանջվում է, սակայն դրանով հանդերձ նա միայն կլիսասի ավելի ուսանողին: Եթե հաշմանդամ ուսանողը սովորի, որ իրեն մշտապես պետք է հատուկ վերաբերվեն, ապա դրանով նա կվերանգի իր հավասարությունը և չի կարող ինտեգրվել հասարակության մեջ (պետական բուհի դասախոս, իգ.):*

*...Խնդիրներն ու դժվարությունները շարք փարբեր են, կախված այն բանից, թե ինչ դեֆեկտ ունի այդ երեխան: Ամեն դեպքում պետք է դրսևորել համբերատարություն, պետք է ավելի մանրակրկիտ բացատրել, որովհետև մեկը կարող է շուրջ սերտել, մյուսը՝ ուշ: Շարք հաճախ հակառակն է լինում, հաշմանդամ ուսանողներն իրենք են պահանջում, որ իրենց հանդեպ պահանջկոտ լինենք, որպեսզի չփարբերվեն: Շարք նուրբ պետք է վերաբերվել (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Սկզբում, աշխատելով հաշմանդամություն ունեցող ուսանողի հետ, ես վախենում էի: Ինձ թվում էր, թե ինձ մոտ ամեն ինչ սխալ է գնում, ես չգիտեի՝ ինչպես վարվել, հետո հասկացա, որ կարելի է օգտվել նրանց խորհուրդներից, ովքեր նման աշխատանքի փորձ ունեն (պետական բուհի դասախոս, ար.):*

*...Դժվարությունները կարող են փարբեր լինել, պետք է շարք ուշադրություն դարձնես, մի քանի անգամ բացատրես, որ հաշմանդամություն ունեցող ուսանողը հասկանա: Մի խոսքով, պետք է համբերատար աշխատել, ծնողաբար վերաբերվել (պետական բուհի դասախոս, ար.):*

Վերոնշյալ դժվարությունների հաղթահարման եղանակները հարցվածները կապում են պետական քաղաքականության և բուհի ներքին կանոնակարգերի (պայմանների, մեթոդական ձեռնարկների ապահովման մասով) կատարելագործման հետ: Կարևորվում են նաև հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ արտաժամյա պարապմունքները և լրացուցիչ ժամանակ հատկացնելու պատրաստակամությունը: Նշանակալի դեր է հատկացվում նաև դասախոսների վերապատրաստմանը և փորձի փոխանակմանը:

Անդրադառնալով բուհում հաշմանդամություն ունեցող և հաշմանդամություն չունեցող ուսանողների հանդեպ անհատական մոտեցում կիրառելու անհրաժեշտությանը՝ դասախոսների և ադմինիստրացիաների ներկայացուցիչների կարծիքները ընդհանուր առմամբ բաժանվել են երկու հիմնական խմբերի: Առաջին խմբի ներկայացուցիչները դեմ են արտահայտվել բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողի նկատմամբ անհատական մոտեցման գաղափարին, կարծելով, որ այդպիսով կշեշտադրվի ուսանողի հաշմանդամության փաստը:

...Կիրառելով անհատական մոտեցում՝ մենք ավելի ու ավելի ենք շեշտադրում նրա թուլությունը, նա պետք է նույն ուսումնական պլանով սովորի մյուս ուսանողների հետ: Եթե մենք պրոպագանդում ենք հավասար հնարավորություններ, ապա նաև այդ առումով պետք է հավասարություն լինի **(միջպետական բուհի դասախոս, իգ.)**:

...Յուրաքանչյուր ուսանող ինքն է պարասիսանսարու իր սովորելու որակի և դասերին հաճախելու համար, ուսրի անհատական մոտեցումն այս դեպքում տեղին է: Հաշմանդամների հետ կապված՝ անհատական մոտեցում ցուցաբերելու խնդիր երբևէ չի եղել, որովհետև իրենք ամբողջությամբ ինտեգրվել են այդ համակարգին ու անհատական գրաֆիկի անհրաժեշտություն երբևէ չենք ունեցել **(պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.)**:

...Ես դեմ եմ ամեն տեսակի անհատական մոտեցումներին, բոլորին տրվում է նույն նյութը, բոլորին ներկայացվում է նույն պահանջը: Անհատական մոտեցումը հենց խտրականության սկզբն է **(պետական բուհի դասախոս, իգ.)**:

...Ես կողմ չեմ, որ դասախոսը ուսանողին առանձին ծրագրով բացատրի, մյուսներին՝ առանձին: Մեր մոտ չկա նման բան: Մենք ունեցել ենք ՄՈՒԿ<sup>2</sup>-ով ուսանող, որի ընդունակություններին ոչ մեկ չէր կարող գերազանցել **(ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.)**:

...Քանի որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հիվանդագին ինքնասիրություն ունեն, ապա կարծում եմ՝ եթե դասախոսները նրանց անհատական մոտեցում ցույց տան, ապա հարց կառաջանա, արդյոք իրենք դրանից իրենց լավ կզգան... Դա շատ վիճելի է **(միջպետական բուհի դասախոս, ար.)**:

Երկրորդ խմբի ներկայացուցիչների կարծիքով, բոլոր ուսանողների, հատկապես, հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ աշխատանքում անհատական մոտեցումը պարտադիր է, քանի որ յուրաքանչյուր մարդ անհատականություն է և առանձնահատուկ մոտեցում է պահանջում:

...Քանի որ մեր բուհը ուսանողակենտրոն մոտեցումով է աշխատում, ապա յուրաքանչյուր ուսանողի հետ աշխատում ենք անհատապես: Դա օգնում է իրենց զգալ ավելի ինքնավարաբար, արդյունքում իրենց համարում են հասարակության լիիրավ անդամ՝ մոռանալով, որ իրենք հաշմանդամ են **(ոչ պետական բուհի դասախոս, իգ.)**:

...Մեզ մոտ անհատական մոտեցում է բոլոր ուսանողների հանդեպ, անկախ նրանից՝ հարուկ կարիք ունեն, թե ոչ, անգամ անկախ կարիքների աստիճանից: Ես դեմ եմ, որ հարուկ ուշադրություն դարձվի հարուկ կարիք ունեցող մարդկանց նկատմամբ, որովհետև դա ավելի շատ փարանջարում է նրանց հասարակությունից **(միջպետական բուհի դասախոս, իգ.)**:

...Ես կարծում եմ, որ պետք է ողջ կուրսին ցուցաբերել անհատական մոտեցում, որպեսզի դասախոսը կարողանա հասկանալ, թե ներկայացված նյութը ում մոտ ինչպիսի նարվածք է տրվել, քանի որ մարդիկ տարբեր են ու տարբեր են նրանց ընկալման առանձնահատկությունները **(պետական բուհի դասախոս, իգ.)**:

...Կարծում եմ, որ հենաշարժողական խնդիրներ ունեցողին անհատական մոտեցում պետք չի լինի ցույց տալ, իսկ եթե ուսանողն ունենա խոսքային խնդիրներ, արդեն պետք է դասախոսը այնպես անի, որ օրինակ, նա քիչ ներգրավված լինի հարց ու պարասիսանի մեջ, նրա համար ավելի շատ նախարեսի գրավոր տարբերակներ: Մա է անհատական մոտեցումը, որպեսզի դասախոսը յուրաքանչյուր ուսանողին իր հնարավորությունների շրջանակներում քննի **(պետական բուհի դասախոս, իգ.)**:

Իսկ հաշմանդամություն ունեցող ուսանողների հարաբերությունները համակուրսեցիների հետ հարցվածները արդյունավետ գնահատեցին, քանի որ կուրսում հաշմանդամություն ունեցող ուսանողի ներկայությունը նպաստում է փոխօգնության մթնոլորտի ստեղծմանը:

2 Մանկական ուղեղային կաթված:



*Կուրսի ուսանողները անում են ամեն ինչ, որպեսզի իրենց հեղի սովորող հաշմանդամ ուսանողը ինքնագրվի և իրեն ոչ յիարժեք չզգա: Ես տեսել եմ, թե ինչպես է կուրսը նկատում իր հաշմանդամ կուրսը նկատողը հպարտորեն գրկած իջեցնում աստիճաններից (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Լարվածությունը տարեցտարի ավելի քանում է, որովհետև մեր ուսանողներից շատերը ներառական դարձնում են հաճախել, բնականաբար, նրանք արդեն պարտադիր են նման մարդկանց հեղի նաև բուհում համապետ սովորելուն: Ես ինքնուրույն ամեն քան չկար, աշակերտները միայն ուսանող դառնալուց հեղի էին իրենց կողքին տեսնում հաշմանդամ երեխայի: Տարբեր հեռուարահողորդումների, լրարվամիջոցների միջոցով ներառական կրթությունը, հանդուրժողականությունը այնքան պրոպագանդվեց, որ թեկուզ մի փոքր, բայց գաղափարահոսության փոփոխություն էլ կա ընդհանուր ազգայնակցության մեջ, ինչը դրական է ազդում բուհում նման մարդկանց հեղի սովորելու գաղափարի վրա (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, իգ.):*

### **Ներառական կրթության ոլորտում մասնագետների վերապատրաստման անհրաժեշտություն**

Հայաստանում ներառական կրթության ոլորտը դեռևս ներդրման փուլում է, և բնական է, որ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների խիստ անհրաժեշտություն է զգացվում: Ոլորտը համապատասխան մասնագետներով համալրելը պահանջում է կանոնակարգված և համապարփակ վերապատրաստումների շարք: Դրանք կարևոր են ինչպես զուտ տեղեկատվական տեսանկյունից, այնպես էլ մասնագետների մոտ համապատասխան վերաբերմունքի և դիրքորոշումների ձևավորման տեսանկյունից:

Սակայն, հետազոտության արդյունքները վկայում են, որ հարցվածների կեսից ավելին վերապատրաստման ծրագրերի ընդհանրապես չի մասնակցել: Իսկ վերապատրաստումներ անցած հարցվածները նշել են, որ ներառական կրթության թեման ընդգրկված չի եղել օրակարգում: 87 հարցվածներից միայն 5-ին է հաջողվել մասնակցել ներառական կրթության թեման ընդգրկող վերապատրաստումների:

Հարցվածները վերապատրաստման անհրաժեշտությանը երկակի գնահատական են տալիս՝ մի կողմից, կարծիքներ են հնչում, որ դասախոսները կարիք չունեն լրացուցիչ վերապատրաստումների, գիտելիքների և հմտությունների, քանի որ կրթված, խելացի, փորձառու մարդիկ են, մյուս կողմից՝ գրեթե բոլոր դասախոսները, բացառությամբ 6-ի, հայտնել են իրենց պատրաստակամությունն ու ցանկությունը նման վերապատրաստումների մասնակցելու վերաբերյալ, իսկ բոլոր բուհերի ադմինիստրացիաների ներկայացուցիչները ներառական կրթության թեմայով վերապատրաստման անհրաժեշտությունը դիտարկել են առաջնային կարևորության քայլ:

*...Անհրաժեշտություն կա ներառական կրթության թեմայով վերապատրաստման, վերջին հաշվով, քաղաքակիրթ աշխարհը պահանջում է այս հարցի կանոնակարգային, այլ ոչ թե էմոցիոնալ և մարդկային մոտեցում, որը պահանջարկ ունի նաև ներառվելու կրթական ծրագրերի ուղղակիության մեջ (պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

*...Հաշմանդամության մասին տեղեկությունները կյանքում էլ են պետք, որպեսզի կարողանաս ճիշտ մոտեցում ցուցաբերել էդ մարդուն: ...Լրացուցիչ անգամ ինֆորմացիա ու գիտելիք սրանալը երբեք չի խանգարի (պետական բուհի դասախոս, իգ.):*

Այսպիսով, հաշմանդամություն ունեցող ուսանողի հետ աշխատելու համար դասախոսներին անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ և հմտություններ՝ «հաշմանդամություն» տերմինի, վերջինիս հետ կապված դիսկուրսի, տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու, շփվելու առանձնահատկությունների վերաբերյալ: Պակաս կարևոր չէ նաև դասախոսների մոտ համապատասխան վերաբերմունքի ձևավորումը և հուզական պատրաստվածությունը, որպեսզի կարողանան հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ աշխատել՝ ցուցաբերելով անհատական մոտեցում այնպես, որ դա չանդրադառնա կրթության որակի վրա և չփոխակերպվի հաշմանդամություն չունեցող ուսանողների նկատմամբ խտրական վերաբերմունքի:

## ***Ներառականության ապահովմանն ուղղված քայլեր***

Բուհերի ադմինիստրացիաների ներկայացուցիչների հետ հարցազրույցներից պարզ դարձավ, որ ներկայումս բուհերը մատչելի և ներառական դարձնելու ուղղությամբ կատարվում են հետևյալ քայլերը.

- ⇒ անհատական ուշադրություն հաշմանդամություն ունեցող ուսանողների նկատմամբ, անհատական հանդիպումներ, հուզող հարցերի քննարկում և հնարավորության դեպքում աջակցության կազմակերպում,
- ⇒ զրույցներ, բացատրական և հոգեբանական աշխատանք դասախոսական կազմի հետ՝ ուղղված դրական վերաբերմունքի ձևավորմանը, դասախոս-ուսանող հարաբերությունների ներդաշնակության ապահովմանը:

Իսկ բուհի ներառականության ապահովմանն ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների շարքում նշել են հետևյալը.

- ⇒ ներառական կրթության թեմայով վերապատրաստումներ,
- ⇒ տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող ուսանողների համար մատչելի ուսումնական ռեսուրսների, նյութերի ձեռքբերում,
- ⇒ բուհի տարածքում տեղաշարժման և ֆիզիկական մատչելիության պայմանների ապահովում,
- ⇒ հաշմանդամություն ունեցող ուսանողների համար լրացուցիչ արտոնությունների սահմանում:

Հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթությունը կազմակերպելու ուղղությամբ վերոնշյալ միջոցառումները ձեռնարկելու համար որպես հիմնական խոչընդոտ նշվում է ֆինանսական միջոցների բացակայությամբ: Ոչ պետական և միջպետական բուհերի ներկայացուցիչները նշված ծրագրերի համար ֆինանսական ռեսուրսների հայթայթման հարցում ակնկալում են հովանավորների՝ հասարակական, միջազգային կազմակերպությունների աջակցությունը: Իսկ պետական բուհերը ներկայացնող հարցվածները նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների խնդրի լուծումը կապում են պետության քաղաքականության և բարձրագույն կրթության ներառականության ապահովմանն ուղղված ռազմավարության մշակման հետ:

*...Մենք պետք է շարժադրերի, շարժումների հիմնք, որպեսզի նրանց օգնությամբ կարողանանք նախ՝ ֆիզիկական, ապա՝ կրթական ծրագրերի մատչելիությունն ապահովել (ոչ պետական բուհի ադմինիստրացիայի ներկայացուցիչ, ար.):*

Ամփոփելով հետազոտության այս բաժինը, կարելի է առանձնացնել բուհերի դասախոսական և ադմինիստրատիվ աշխատակազմի դիրքորոշումները և վերաբերմունքը բնորոշող մեկ հիմնական գիծ՝ իրազեկվածության հստակ արտահայտված պակաս: Շահագրգիռ այս կողմերի պատասխանները վկայում են այն մասին, որ ցածր է տեղեկացվածությունը ինչպես ներառական կրթության և դրա չափորոշիչների, այնպես էլ հաշմանդամության բազմազան տեսակների և դրանց առանձնահատկությունների, հաշմանդամություն ունեցող անձանց ներուժի և կրթական կարիքների վերաբերյալ: Արդյունքում հաշմանդամություն ունեցող ուսանողների հանդեպ մոտեցումները լի են կարծրատիպային տարրերով, իսկ գնահատականները ներառական կրթության վերաբերյալ ոչ միանշանակ են և անզամ հակասական: Հատկապես թյուր են պատկերացումները բուհական կրթության ծրագրային, ակադեմիական ներառականության մասին. կրթական ծրագրի հարմարեցումը որոշ հարցվածների տեսանկյունից դիտվում է որպես խտրականություն, իսկ ուսանողի հանդեպ անհատական մոտեցումը նույնացվում է անհատական գրաֆիկի հետ:

Իրազեկման խնդրից զատ, որակական հետազոտության տվյալների հիման վրա կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խոչընդոտները.

- ⇒ համապատասխան մասնագետների բացակայություն կամ առկա մասնագետների ոչ բավարար որակավորում,
- ⇒ հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ աշխատանքի հստակ մեթոդաբանության և ընթացակարգի բացակայություն,
- ⇒ ֆիզիկական միջավայրի անմատչելիություն,
- ⇒ հաշմանդամություն ունեցող ուսանողներին ներգրավելու պատրաստակամության բացակայություն,
- ⇒ կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային անհամապատասխանություն ներառական կրթության պահանջներին,
- ⇒ բուհերի կողմից հաշմանդամություն ունեցող ուսանողների մասին տվյալների հավաքագրման և դրանց կիրառման արդյունավետ գործընթացի բացակայություն,
- ⇒ թերի նյութատեխնիկական բազա,
- ⇒ հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման հմտությունների պակաս,
- ⇒ հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ կարծրատիպային վերաբերմունք բուհական համակարգից դուրս՝ ընդհանուր հանրության շրջանում:

Բացահայտված խնդիրների, խոչընդոտների և թերությունների բազմությունն ու դրանց կարևորությունը վկայում են, որ բարձրագույն կրթության համակարգը ներկայումս չի համապատասխանում ներառական կրթության պահանջներին: Այնուամենայնիվ, հարցվածների շրջանում նկատվում են կառուցողական տարրեր, մասնավորապես վերապատրաստվելու, նոր հմտություններ ձեռք բերելու պատրաստակամություն, հաշմանդամ ուսանողներին կրթական գործընթացի մեջ ներառելու պատրաստակամություն (չնայած ներառման գործընթացի վերաբերյալ երբեմն մակերեսային պատկերացումներին), հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթության կազմակերպման հատուկ ընթացակարգերի մշակման և կիրառման պատրաստակամություն:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության ֆիզիկական և ծրագրային մատչելիության, ինչպես նաև ակադեմիական ներառականության գնահատմանն ուղղված սույն հետազոտության շրջանակներում իրականացվել են դեմ առ դեմ հարցազրույցներ հաշմանդամություն ունեցող և հաշմանդամություն չունեցող ուսանողների հետ, ինչպես նաև հեռախոսային հարցում հանրության և հաշմանդամություն ունեցող այն անձանց հետ, ովքեր 18-35 տարեկան են և երբևէ չեն ուսանել բուհում:

Նշված 4 խմբերի հետ իրականացված հարցազրույցներում առկա են նույնական հարցեր, որոնց պատասխանները վեր են լուծվել համեմատության մեջ: Նախքան բարձրագույն կրթության ներառականության վերաբերյալ հարցվածների կարծիքն ուսումնասիրելը՝ ուսումնասիրվել են հարցվածների մոտ «հաշմանդամություն» բառի հետ առաջացող զուգորդությունները (ասոցիացիաները): Ազատ զուգորդությունների մեթոդը հանդիսանում է պրոյեկտիվ տեխնիկա, որը պարունակում է գիտափորձի տարրեր և հնարավորություն է տալիս դուրս բերել հարցվողի վերաբերմունքը երևույթի հանդեպ՝ առանց սահմանափակումների և հետազոտողի ազդեցության:

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են հարցվողների 4 տարբեր խմբերի զուգորդությունները, որոնք նրանց մոտ առաջանում են «հաշմանդամություն» բառը լսելիս: Առավել հաճախ հարցվածների բոլոր խմբերում հնչել են «հիվանդություն, անկարողություն, անօգնականություն, սահմանափակումներ» զուգորդությունները: Բացասական հույզեր առավել հաճախ նշել են հաշմանդամություն ունեցող հարցվողները, մասնավորապես հաշմանդամություն ունեցող ուսանողների 18,3%-ը և հաշմանդամություն ունեցող բնակիչների 17,7%-ը: Կարևոր է, որ հաշմանդամություն չունեցող ուսանողները առավել հաճախ նշել են օգնելու ցանկությունը, գթասրտությունը և բարությունը՝ 15,5%-ի դեպքում:

**Աղյուսակ 13. Ես կասեմ մի բառ, իսկ Դուք նշեք Ձեզ մոտ առաջացող մինչև 3 ասոցիացիա. «հաշմանդամություն».**

<b>Զուգորդություններ</b>	<b>Հաշմ. ունեցող ուսանողներ</b>	<b>Հաշմ. չունեցող ուսանողներ</b>	<b>Հանրություն</b>	<b>Հաշմ. ունեցող բնակչություն</b>
Հիվանդություն, անկարողություն, անօգնականություն, սահմանափակումներ	33,5%	43,1%	54,6%	52,7%
Հենաշարժողական խնդիրների հետ կապված զուգորդություններ (քայլել չկարողացող մարդ, սայլակ, ձեռնափայտ, հենակ)	15,9%	10,8%	13,2%	2,7%
Բացասական հույզեր (խղճահարություն, տխրություն, ցավ)	18,3%	9,9%	11,1%	17,1%
Օգնելու ցանկություն, գթասրտություն, բարություն	1,0%	15,5%	4,2%	4,6%
Նորմալ մարդ	6,3%	5,4%	4,1%	2,0%
Մտավոր հաշմանդամության հետ կապված զուգորդություններ	-	3,3%	3,0%	2,5%
Հարգանք, կամքի ուժ, հույս	10,3%	4,4%	2,5%	1,0%
Հաշմանդամության այլ տեսակների հետ կապված զուգորդություններ (տեսողական, լսողական, խոսքային խնդիրներ)	1,7%	4,1%	2,1%	1,0%
Ոչ մի զուգորդություն չեն նշել	3,9%	3,3%	5,2%	15,7%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Առավել հաճախ հարցվածների բոլոր խմբերում հնչել են «հիվանդություն, անկարողություն, անօգնականություն, սահմանափակումներ» զուգորդությունները: Հատկանշական է, որ հանրության և հաշմանդամություն ունեցող, բարձրագույն կրթության համակարգում չներգրավված անձանց խմբերում պատասխանի նման տարբերակները հանդիպել են առավել հաճախ. այս պատկերը արտացոլում է անհատի հանդեպ հասարակության վերաբերմունքի և անձի ինքնավերաբերմունքի սերտ փոխկապակցվածությունը: Մյուս կողմից, հաշմանդամություն ունեցող ուսանողների շրջանակում այս տիպի զուգորդություններն ավելի քիչ են հանդիպում. այստեղ երևում է ակտիվ սոցիալական կյանքի դրական ազդեցությունը անձի ինքնավերաբերմունքի վրա: Բացի այդ, ուսանողական ակտիվությունը խթանում է անձի ինքնությունն ապրելակերպը, որն էլ օգնում է վերանայելու հաշմանդամության՝ անգամ իր սեփական հաշմանդամության վերաբերյալ, անձի ունեցած կարծրատիպային վերաբերմունքը: Մակայն զուգորդությունների շարքում ըստ հաճախականության այս խմբերում (հաշմանդամություն ունեցող ուսանողներ և հաշմանդամություն ունեցող անձիք, որոնք ներգրավված չեն բարձրագույն կրթության համակարգում) երկրորդ տեղն են զբաղեցնում բացասական հույզերը (խղճահարություն, տխրություն, ցավ), ընդ որում ցուցանիշները մյուս խմբերի համեմատ զգալիորեն բարձր են: Սա կարող է լինել սեփական հաշմանդամության հետ կապված դժվարությունների հանդեպ հուզական վերաբերմունքի դրսևորում:

Հաշմանդամություն չունեցող ուսանողների խմբում բավականին հաճախակի են (15,5%) օգնելու ցանկության հետ կապված զուգորդությունները, որը ցույց է տալիս որոշակի «հովանավորչական» վերաբերմունք, սակայն դրական ուղղվածությամբ:

Մտավոր հաշմանդամության հետ զուգորդությունները սակավաթիվ են բոլոր խմբերում, բայց միայն հաշմանդամություն ունեցող ուսանողների խմբում են դրանք լիովին բացակայում. այստեղ նկատվում է որոշակի խտրականություն հաշմանդամների միջև, հատկապես մտավոր հաշմանդամության հանդեպ:

Կարևոր է նաև ուշադրություն դարձնել այն դեպքերին, երբ զուգորդություններ ընդհանրապես չեն հնչել: Զուգորդությունների բացակայությունը, որպես կանոն, վկայում է որոշակի խուսափողական վերաբերմունքի մասին: Ազատ զուգորդություններ հնչեցնել առավել հաճախ դժվարացել են հաշմանդամություն ունեցող անձիք, որոնք ներգրավված չեն բարձրագույն կրթության համակարգում: Կարելի է ենթադրել, որ լինելով քիչ ներառված հասարակական կյանքում, այս խմբի մեջ ընդգրկված անձանց համար հաշմանդամությունը շարունակում է մնալ ինքնախարանավորող մի հասկացություն. այստեղից էլ դիմադրությունը երևույթի մասին խոսելու հանդեպ:

Հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասին խոսելիս, հարցվածների բոլոր խմբերում առաջին պլան են մղվել բացասական հույզերը՝ խղճահարություն, ցավ, սարսափ, մեղքի զգացում: Երկրորդ տեղում են օգնելու ցանկության հետ կապված հույզերը: Այս պատկերը կարող է վկայել կրկնակի խտրականության մասին. այս դեպքում անձը առավել խոցելի է ընկալվում ոչ միայն հաշմանդամության, այլև երիտասարդ լինելու արդյունքում:

**Աղյուսակ 14. Ինչ էնոցիաներ են Ձեզ մոտ առաջանում, երբ խոսքը գնում է հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասին.**

Հույզեր	Հաշմ. ունեցող ուսանողներ	Հաշմ. չունեցող ուսանողներ	Հանրություն	Հաշմ. ունեցող բնակչություն
Բացասական հույզեր (խղճահարություն, ցավ, սարսափ)	48,7%	54,9%	66,4%	60,5%
Բարություն, օգնելու ցանկություն	23,0%	26,9%	20,2%	12,5%
Չեզոք, ոչ մի հույզ	-	2,3%	6,2%	18,5%

Հարգանք, ուժ, հաղթանակ	12,6%	15,6%	5,6%	4,1%
Ոչ մի հույզ չեն նշել	15,6%	0,2%	1,6%	4,3%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Հանրության կարծիքի և բարձրագույն կրթական համակարգում չներգրավված հաշմանդամություն ունեցող բնակչության կարծիքի ուսումնասիրման ժամանակ հարցվածներին առաջարկվել է ընտրել այն խնդիրները, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում: Հարկ է նշել, որ հանրության և հաշմանդամություն ունեցող բնակչության կարծիքները էականորեն տարբեր են: Հանրության կողմից առաջնային կարևորության խնդիր է համարվել հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովումը (31,3%), իսկ հաշմանդամություն ունեցող հարցվածների կողմից՝ աշխատանքով ապահովման խնդիրը (32,7%): Բուհերի մատչելիության ապահովման խնդիրը հաշմանդամություն ունեցող անձանց պատասխաններում չորրորդ տեղում է հայտնվել (8,9%), իսկ հանրությունն այն հանրային վայրերի մատչելիության ապահովման խնդրի հետ մեկտեղ դասել է 5-րդ տեղում (8,4%)՝ առավել կարևորելով դպրոցների մատչելիության ապահովման խնդիրը (10,4%) (տե՛ս Աղյուսակ 15):

**Աղյուսակ 15. Եթե որոշում ընդունելու հնարավորություն ունենայիք, ապա նշվածներից ո՞ր 2 խնդիրները առաջին հերթին կլուծեիք**

Խնդիրներ	Հանրություն	Հաշմ. ունեցող բնակչություն
Ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքով	25,4%	32,7%
Ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց առողջապահական ծառայությունների մատչելիությունը	31,5%	29,5%
Ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց ֆինանսական աջակցություն	16,0%	15,9%
Ապահովել բուհերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող մարդկանց համար	8,4%	8,9%
Ապահովել հանրային վայրերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող մարդկանց համար	8,3%	7,2%
Ապահովել դպրոցների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար	10,4%	5,8%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Տեսագոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև հաշմանդամություն ունեցող և չունեցող ուսանողների կողմից մասնագիտության և բուհի ընտրության հարցում ազդեցություն ունեցած գործոնները: Ընդհանուր առմամբ, պատասխանները համանման հաջորդականությամբ են բաշխվել հարցված ուսանողների երկու խմբերում. մասնագիտության և բուհի ընտրության գործում հարցվածների երկու խմբերում էլ էական ազդեցություն է ունեցել մասնագիտության նկատմամբ սերը: Էական տարբերություն է նկատվել հեռակա ուսուցման համակարգի ամկայության գործոնի վերաբերյալ ուսանողների երկու խմբերի պատասխանների միջև: Հաշմանդամություն ունեցող ուսանողների 75,6% համարել են, որ այն էական ազդեցություն է թողել, իսկ հաշմանդամություն չունեցող ուսանողների՝ 8,3%: Հաշմանդամություն ունեցող ուսանողների պատասխաններում ամենաքիչ տեսակարար կշիռն ունի բուհի ֆիզիկական մատչելիության գործոնը, իսկ հաշմանդամություն չունեցողների պատասխաններում այն ընդհանրապես չի հնչել: Հետաքրքրական է նաև, որ մասնագիտության եկամտաբերությունը, որպես ազդեցիկ գործոն հաշմանդամություն ունեցող ուսանողներն ընդհանրապես չեն նշել, որը որոշակիորեն կապվում է հաշմանդամ երիտասարդների մոտ ապագայի մասին ոչ հստակ պատկերացումների հետ, ինչպես նաև այն կարծրատիպի հետ, որ հաշմանդամը չի կարող մեծ գումարներ վաստակել (տե՛ս Աղյուսակ 16):

**Աղյուսակ 16. Մասնագիտության և բուհի ընտրության գործում ազդեցություն ունեցած գործոնները**

Գործոններ	Էական ազդեցություն է ունեցել		Ունեցել է որոշակի ազդեցություն		Ընդհանրապես ազդեցություն չի ունեցել	
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող
Միտում եմ այս մասնագիտությունը	78,9%	80,2%	15,9%	16,0%	5,2%	3,8%
Հեռակա ուսուցման համակարգի առկայությունը	8,3%	75,6%	9,7%	14,5%	82,0%	9,9%
Անվճար կրթություն ստանալու հնարավորությունը	43,2%	68,7%	23,2%	13,0%	33,7%	18,3%
Այս ոլորտում լավագույն բուհն է	61,0%	60,3%	29,6%	29,8%	9,4%	9,9%
Բուհի կրթական ծրագրերի մատչելիությունը	46,7%	52,7%	35,8%	26,0%	17,5%	21,4%
Այս մասնագիտությամբ ես կկարողանամ լավ աշխատանք գտնել	44,8%	47,3%	38,8%	35,9%	16,4%	16,8%
Ծնողների, ընտանիքի անդամների կարծիքը	41,3%	46,6%	32,2%	26,7%	26,5%	26,7%
Բուհի ֆիզիկական մատչելիությունը	-	35,1%	-	33,6%	-	31,3%
Սա եկամտաբեր մասնագիտություն է	36,7%	-	40,8%	-	22,4%	-

Հաշմանդամություն ունեցող և երբևէ բուհում չսովորած բնակչության հեռախոսային հարցման ժամանակ նախատեսվում էր պարզել նրանց փորձը՝ կապված բարձրագույն կրթության հետ: Այդպես՝ 86,1%-ը երբևէ չեն փորձել բուհ ընդունվել, իսկ 13,9%-ը փորձել են: Այն հարցվածներից, որոնք բուհ ընդունվելու փորձ չեն կատարել, 27,6%-ը բուհ չընդունվելը պատճառաբանել է ցանկության բացակայությամբ, իսկ 27,2%-ը՝ ֆինանսական անապահովությամբ: Բուհերի ֆիզիկական անմատչելիությունը նշել են 12,9%-ը, առողջական խնդիրները՝ 9,2%-ը, զբաղվածությունը՝ 8,8%-ը (տե՛ս Աղյուսակ 17.1): Մնացած պատասխաններն ավելի հազվադեպ են հնչել:

**Աղյուսակ 17.1. Ինչ պատճառով չեք փորձել ընդունվել բուհ**

Պատճառներ	Հաշմ. ունեցող բնակչություն
Ցանկության բացակայություն	27.6%
Ֆինանսական անապահովություն	27.2%
Բուհերի ֆիզիկական անմատչելիություն	12.9%
Առողջական խնդիրների պատճառով	9.2%
Աշխատում եմ, ունեմ արհեստ, զբաղվում եմ հողագործությամբ	8.8%
Կրթության անիմաստ և անհետանկարային լինելու պատճառով	3.7%
Տարիքի պատճառով	3.7%
Ընտանիքի անհամաձայնություն	1.8%
Ամաչում եմ տնից դուրս գալ	1.5%
Դժվարանում եմ պատասխանել	3.7%
<b>Ընդամենը</b>	<b>100.0%</b>



Առանձին հարց էր նախատեսված նաև հաշմանդամություն ունեցող այն հարցվողների համար, որոնք սովորել են բուհում, բայց չեն ավարտել կրթությունը: Պարզ դարձավ, որ բարձրագույն կրթությունը կիսատ թողնելու հիմնական պատճառը հանդիսացել է ֆինանսական խնդիրների առկայությունը՝ 45,6%:

**Աղյուսակ 17.2. Ինչո՞ւ եք բարձրագույն կրթությունը կիսատ թողել**


Պատճառներ	Հաշմ. ունեցող բնակչություն
Ֆինանսական խնդիրների պատճառով	45,6%
Պարզապես որոշել եմ թողնել համալսարանը	18,4%
Երեխայի/ամուսնու պատճառով	9,1%
Հիվանդության պատճառով	9,1%
Աշխատանքի համար	9,1%
Անձնական խնդիրների պատճառով	9,1%
	100.0%

Հաշմանդամություն ունեցող բնակիչների 57,8%-ը ապագայում բուհում սովորելու ցանկություն հայտնեցին, իսկ 42,2%-ը՝ ոչ:

Հարցվածների մեծ մասը բուհում սովորելու նախընտրելի ձև են համարել հաշմանդամություն չունեցող և բոլոր տեսակների հաշմանդամություն ունեցող անձանց հետ միասին սովորելու տարբերակը՝ ներառական կրթությունը: Այսինքն, կարելի է փաստել, որ ընդհանուր առմամբ մեր հանրությունը պատրաստ է ընդունել ներառական կրթության սկզբունքները, այլ է խնդիրը, թե որքանով խորքային և իրատեսական են ներառական կրթության մասին պատկերացումները:

Բնական է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ բուհում սովորելու տարբերակին հաշմանդամություն ունեցող ուսանողները և բարձրագույն կրթության համակարգում չներգրավված անձինք քիչ են հակված: Սա փաստում է, որ հաշմանդամների այս խմբերը պատրաստ են ներգրավվել հասարակական կյանքի մեջ և չեն խուսափում այլ մարդկանց հետ շփվելուց: Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ բուհում սովորելու տարբերակին ավելի հակված են հաշմանդամություն չունեցող ուսանողները և հանրությունը, համապատասխանաբար՝ 25,2% և 20,8%: Հաշմանդամություն ունեցող ուսանողներից այս եղանակն ընտրել են միայն 3,1%-ը (տե՛ս Գծապատկեր 1):

**Գծապատկեր 1. Ձեր կարծիքով, բուհում սովորելու ո՞ր ձևն է ավելի նպատակահարմար և արդյունավետ**





Գծապատկերը ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ՝ թե՛ ընդհանուր բնակչության, թե՛ ուսանողության շրջանում, ավելի շատ են հակված ներառական կրթության տարբերակին և ավելի քիչ՝ հատուկ բուհում սովորելու տարբերակին, ի տարբերություն հաշմանդամություն չունեցող հարցվողների:

Միաժամանակ, եթե դիտարկենք հաշմանդամություն չունեցող ուսանողների կողմից այս հարցին տրված պատասխանը՝ կրացահայտենք, որ այն ուսանողները, որոնց բուհում սովորում են հաշմանդամություն ունեցող ուսանողներ, ավելի հաճախ են հակված ընտրել ներառական կրթության տարբերակը:

**Աղյուսակ 18. Ձեր կարծիքով, բուհում սովորելու ձևն է ավելի նպատակահարմար և արդյունավետ / Կամ(ն) արդյոք հաշմանդամություն ունեցող ուսանող(ներ) Ձեր բուհում**

Ձեր կարծիքով, բուհում սովորելու ձևն է ավելի նպատակահարմար և արդյունավետ:	Կամ(ն) արդյոք հաշմանդամություն ունեցող ուսանող(ներ) Ձեր բուհում:		Ընդամենը
	Այո	Ոչ	
Ներառական՝ հաշմանդամություն չունեցող և բոլոր տեսակների հաշմանդամություն ունեցող անձանց հետ միասին	52,1%	40,8%	45,1%
Ներառական՝ հաշմանդամություն չունեցող և որոշ տեսակների հաշմանդամություն ունեցող անձանց հետ միասին	29,9%	29,6%	29,7%
Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ բուհում	18,0%	29,6%	25,2%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%

Տվյալ դեպքում, բուհում հաշմանդամություն ունեցող ուսանողների առկայության և հարցվողի նախընտրած սովորելու ձևի միջև վիճակագրորեն նշանակալի կապ է նկատվում<sup>3</sup>:

Հաշմանդամություն ունեցող ուսանողների գերակշռող մասը իրենց լիովին ինքնուրույն են համարում ինչպես բուհ հաճախելիս (87%) և քննություններին նախապատրաստվելիս (81,7%), այնպես էլ բուհից դուրս (80,9%) (տե՛ս Աղյուսակ 19): Բուհ հաճախելիս՝ հիմնականում օգնության են դիմում հաշմանդամություն ունեցող ուսանողների միայն 0,8%: Կարող ենք փաստել, որ այս մարդկանց հաշմանդամությունը չի խանգարում ինքնուրույն կենսակերպին:

**Աղյուսակ 19. Հարցվածների ինքնուրույնության աստիճանը**

	Լիովին ինքնուրույն են	Երբեմն դիմում են օգնության	Հիմնականում դիմում են օգնության	Ընդամենը
Բուհ հաճախելիս	87,0%	12,2%	0,8%	100.0%
Քննություններին նախապատրաստվելիս	81,7%	16,0%	2,3%	100.0%
Բուհից դուրս	80,9%	16,8%	2,3%	100.0%

Հաշմանդամություն ունեցող և հաշմանդամություն չունեցող ուսանողների կարծիքով, ներառական կրթությունը լիովին կիրառելի է հենաշարժողական խնդիրներ ունեցողների համ-


<sup>3</sup>  $\chi^2(8, N=1103)=15,7, p<0,001$

ար, ավելի շուտ կիրառելի է խոսքային և լսողական խնդիրներ ունեցողների և բոլորովին կիրառելի չէ մտավոր խնդիրներ ունեցողների համար:

Այս հարցում հաշմանդամություն ունեցող բնակչության պատասխանները հարցվողների մյուս խմբերի պատասխաններից որոշակիորեն տարբերվում են՝ ներառական կրթության կիրառելիությունը համեմատաբար ավելի ցածր է գնահատվում հենաշարժողական խնդիրներով մարդկանց համար, իսկ լսողական և մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց համար՝ մի քիչ ավելի բարձր: Հաշմանդամություն ունեցող ուսանողներն, իրենց հերթին, ավելի բարձր են գնահատում հենաշարժողական, տեսողական և խոսքային խնդիրներ ունեցող մարդկանց համար ներառական կրթության կիրառելիությունը (տե՛ս գծապատկեր 2):

**Գծապատկեր 2. Ըստ Ձեզ, ներառական կրթությունը որքանով է կիրառելի...**

**1 բոլորովին կիրառելի չէ**  
**4 լիովին կիրառելի է**



Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի ուսումնասիրմանը՝ պարզ է դարձել, որ հարցվածների հիմնական մասը բոլոր տեսակների հաշմանդամություն ունեցող անձանց փորձում են օգնել և վերաբերում են այնպես, ինչպես մյուսներին: Հաճախ են հնչել նաև «հարգում եմ» և «այնպես, ինչպես մյուսների» պատասխանների տարբերակները: Հազվադեպ են հնչել «խղճում եմ» և «խուսափում եմ նրանցից» պատասխանները՝ հիմնականում այս պատասխանները նշվել են մտավոր խնդիրներ ունեցող անձանց հանդեպ վերաբերմունքը նկարագրելիս (տե՛ս Աղյուսակ 20): Կարելի է եզրակացնել, որ մտավոր հաշմանդամությունը առավել զուգորդվում է անկարողության և աղապտիվության ցածր մակարդակի հետ:

**Աղյուսակ 20 (սկիզբ). Ինչպիսին է Ձեր վերաբերմունքը տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ**

Հաշմանդամության տեսակ	Խղճում եմ			Խուսափում եմ նրանցից		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողներին	3,6%	6,7%	14,4%	0,4%	3,3%	0,5%
Տեսողական խնդիրներ ունեցողներին	3,3%	3,3%	14,2%	0,6%	-	0,9%

Լսողական խնդիրներ ունեցողներին	3,8%	-	13,7%	1,0%	-	1,2%
Մտավոր խնդիրներ ունեցողներին	12,9%	6,7%	22,1%	11,5%	10,0%	7,8%
Խոսքային խնդիրներ ունեցողներին	3,1%	3,3%	14,0%	1,7%	-	1,7%

**Աղյուսակ 20 (շարունակություն I). Ինչպիսին է Ձեր վերաբերմունքը տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ**

Հաշմանդամության տեսակ	Փորձում եմ օգնել նրանց			Հարգում եմ		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողներին	29,6%	26,7%	38,6%	28,7%	16,7%	27,5%
Տեսողական խնդիրներ ունեցողներին	43,3%	23,3%	47,7%	21,2%	20,0%	19,8%
Լսողական խնդիրներ ունեցողներին	34,6%	20,0%	42,3%	23,7%	30,0%	21,6%
Մտավոր խնդիրներ ունեցողներին	35,1%	26,7%	36,7%	19,2%	23,3%	18,2%
Խոսքային խնդիրներ ունեցողներին	40,3%	26,7%	39,3%	10,6%	16,7%	22,7%

**Աղյուսակ 20 (շարունակություն II). Ինչպիսին է Ձեր վերաբերմունքը տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ**


Հաշմանդամության տեսակ	Այնպես, ինչպես մյուսներին			Դժվարանում եմ պատասխանել		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողներին	37,6%	43,3%	18,9%	0,1%	3,3%	0,1%
Տեսողական խնդիրներ ունեցողներին	31,3%	46,7%	17,4%	0,2%	6,7%	0,1%
Լսողական խնդիրներ ունեցողներին	36,4%	46,7%	20,8%	0,4%	3,3%	0,4%
Մտավոր խնդիրներ ունեցողներին	20,6%	20,0%	14,4%	0,3%	13,3%	0,8%
Խոսքային խնդիրներ ունեցողներին	34,0%	46,7%	22,1%	0,2%	6,7%	0,2%

Հետաքրքրական է, որ հաշմանդամություն ունեցող ուսանողների 61,1%-ը նշել են, որ իրենց բուհում կան հաշմանդամություն ունեցող այլ ուսանողներ, մինչդեռ հաշմանդամություն չունեցող


ուսանողների ընդամենը 38,3%-ն է նշել այդ մասին: Հանրային կարծիքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարցվածների 48,9%-ը նշել են, որ նրանց շրջապատում չկան հաշմանդամություն ունեցող անձինք: Սա վկայում է այն մասին, որ հանրության համար հաշմանդամություն ունեցող անձինք պարզապես «տեսանելի» չեն: Այս երևույթի պատճառները կարող են բազմազան լինել, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ցածր մասնակցությունը սոցիալական կյանքում, ինչպես նաև հանրության կողմից խուսափողական վերաբերմունքը:

Բոլոր խմբերում ուսումնասիրվել է իրենց շրջապատի հաշմանդամների հաշմանդամության տեսակի վերաբերյալ իրենց տեղեկացվածությունը: Այն հարցին, թե հաշմանդամության ինչպիսի տեսակներ ունեցող ուսանողներ են սովորում իրենց բուհում, հաշմանդամություն չունեցող ուսանողների 53%-ը նշել է հենաշարժողական խնդիրներ ունեցողների մասին, 21,3%-ը՝ տեսողական խնդիրներ ունեցողների մասին, իսկ հաշմանդամություն ունեցող ուսանողների 33,3%-ը՝ հենաշարժողական և 29,9%-ը՝ տեսողական խնդիրներ ունեցողների մասին (տե՛ս Գծապատկեր 3.1): Իրենց շրջապատում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հարցին հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքում գրեթե նույն պատկերն է ստացվել (տե՛ս Գծապատկեր 3.2):

**Գծապատկեր 3.1 Ի՞նչ տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք են սովորում (Ձեր բուհում)**



**Գծապատկեր 3.2 Ի՞նչ տեսակի հաշմանդամություն ունեն նրանք (Ձեր շրջապատում)**




Կարելի է եզրակացնել, որ հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամներն առավել տեսանելի են թե՛ հանրության, թե՛ հաշմանդամություն չունեցող ուսանողների համար, մինչդեռ հաշմանդամություն ունեցող ուսանողները, հնարավոր է, ավելի ընկալունակ են

հաշմանդամության տարբեր դրսևորումների նկատմամբ: Այս ենթադրությունը ամրապնդվում է նաև այն փաստով, որ հաշմանդամություն ունեցող ուսանողների 62,5%-ը նշել է, որ իրենց կուրսում չկան հաշմանդամություն ունեցող այլ ուսանողներ, մինչդեռ հաշմանդամություն չունեցող ուսանողների 84,6%-ն է նման կարծիք արտահայտել: Հավանաբար, այստեղ դրսևորվում է հաշմանդամություն չունեցող ուսանողների ավելի ցածր տեղեկացվածությունը այդ հարցի վերաբերյալ:


Պատասխանելով կուրսում սովորող այլ ուսանողների հաշմանդամության տեսակների վերաբերյալ հարցին՝ հաշմանդամություն չունեցող ուսանողների 46%-ը նշել է հենաշարժողական խնդիրներ ունեցողների մասին, 18%-ը՝ տեսողական խնդիրներ ունեցողների մասին, իսկ հաշմանդամություն ունեցող ուսանողների 34,2%-ը՝ հենաշարժողական և 34,3%-ը՝ տեսողական խնդիրներ ունեցողների մասին (տե՛ս Գծապատկեր 4):

**Գծապատկեր 4. Ինչ տեսակի հաշմանդամություն ունեն նրանք (կուրս)**



Հաշմանդամություն ունեցող ուսանողներն իրենց նկատմամբ հաշմանդամություն չունեցող ուսանողների վերաբերմունքը բնորոշելիս նշել են, որ նրանց վերաբերվում են այնպես, ինչպես մյուս համակուրսեցիներին (80,9%): Միայն 0,8%-ն են նշել, որ խղճում են նրանց. ևս 0,8%՝ որ խուսափում են նրանցից (տե՛ս Գծապատկեր 5): Այս պատկերը վկայում է երկու կողմերի՝ արդյունավետ հարաբերությունների կառուցման պատրաստակամության մասին: Փաստացի հաշմանդամ և ոչ հաշմանդամ ուսանողները համատեղ ուսումնական գործունեություն իրականացնելու խնդիր չունեն:

**Գծապատկեր 5. Անձամբ Ձեզ ինչպե՞ս են վերաբերում հաշմանդամություն չունեցող ուսանողները**



Հաշմանդամություն ունեցող ուսանողները նշել են, որ ակտիվ մասնակցում են ուսանողական խնջույքներին: Բուհական այլ միջոցառումներին մասնակցության մակարդակը համեմատաբար ցածր է: Հարկ է նշել նաև, որ հաշմանդամություն չունեցող ուսանողները՝ հաշմանդամություն ունեցող ուսանողների ակտիվությունը համեմատաբար ավելի ցածր են գնահատում (տե՛ս Աղյուսակ 21):

**Աղյուսակ 21 (սկիզբ). Որքան հաճախ են հաշմանդամություն ունեցող ուսանողները մասնակցում արտաուսումնական կյանքին**


Միջոցառում	Միշտ են մասնակցում		Հաճախ են մասնակցում	
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող
Ու. խորհրդի աշխատանքներին	10,3%	14,5%	21,6%	13,7%
Բուհական գիտական միջոցառումներին (կոնֆերանսներ, սեմինարներ)	10,0%	13,0%	37,7%	25,2%
Բուհական ժամանցային միջոցառումներին (համերգ և այլն)	11,0%	22,9%	31,3%	19,8%
Ուսանողական խնջույքներին (կուրսով քեֆ, էքսկուրսիա)	16,1%	51,1%	34,8%	29,0%
Ուսանողական ակումբներին	9,0%	18,3%	31,0%	13,7%

**Աղյուսակ 21 (շարունակություն). Որքան հաճախ են հաշմանդամություն ունեցող ուսանողները մասնակցում արտաուսումնական կյանքին**

Միջոցառում	Հազվադեպ են մասնակցում		Երբեք չեն մասնակցում		Դժվարանում են պատասխանել	
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող
Ու. խորհրդի աշխատանքներին	35,2%	20,6%	14,8%	51,1%	18,1%	-
Բուհական գիտական միջոցառումներին (կոնֆերանսներ, սեմինարներ)	28,1%	27,5%	9,7%	34,4%	14,5%	-
Բուհական ժամանցային միջոցառումներին (համերգ և այլն)	34,8%	29,8%	10,3%	26,7%	12,6%	0,8%
Ուսանողական խնջույքներին (կուրսով քեֆ, էքսկուրսիա)	23,5%	9,2%	9,0%	10,7%	16,5%	-
Ուսանողական ակումբներին	26,5%	24,4%	14,8%	43,5%	18,7%	-

Հաշմանդամություն ունեցող ուսանողների 42%-ը որպես արտաուսումնական կյանքին չմասնակցելու պատճառ նշել են ցանկության բացակայությունը, իսկ 25%-ը՝ ժամանակի բացակայությունը: Հարցվածների միայն 2%-ն է նշել միջավայրի անմատչելիության մասին (տե՛ս գծապատկեր 6):

**Գծապատկեր 6. Եթե չեք մասնակցում արտաուսումնական կյանքին, ապա ո՞րն է պատճառը**



ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող մարդկանց մասնակցությունը հասարակական կյանքին ցածր է գնահատվել նաև հանրային հարցման շրջանակներում հարցվածների կողմից: Այսպես, «հազվադեպ են մասնակցում» պատասխանի տարբերակը նշել են հարցվածների 64,3%-ը, իսկ 10%-ի կարծիքով, հասարակական կյանքին նրանք ընդհանրապես չեն մասնակցում:

Ինչպես և ուսանողների պատասխանների դեպքում, հաշմանդամություն ունեցող բնակիչներն ևս ավելի բարձր են գնահատում իրենց մասնակցությունը հասարակական կյանքին, քան հանրությունը: Հաշմանդամություն ունեցող բնակչության 35,8%-ը գտնում են, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակական կյանքին լիովին մասնակցում են, իսկ 18,4%-ն նշել են, որ ընդհանրապես չեն մասնակցում (տե՛ս Աղյուսակ 22, 23):

Արդյունքում, հաշմանդամություն չունեցող անձինք (ինչպես ուսանողները, այնպես էլ ընդհանուր բնակչությունը) հաշմանդամների մասնակցությունը հասարակական/բուհական կյանքում զգալիորեն ավելի ցածր են գնահատել, քան հաշմանդամություն ունեցող անձինք:

**Աղյուսակ 22. ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող մարդիկ որքանով են մասնակցում հասարակական կյանքին**

Հաճախականություն	Հանրություն	Հաշմ. ունեցող բնակչություն
Լիովին մասնակցում են	3,2%	35,8%
Հաճախ են մասնակցում	13,9%	14,2%
Հազվադեպ են մասնակցում	<b>63,8%</b>	31,0%
Ընդհանրապես չեն մասնակցում	10,2%	18,4%
Դժվարանում եմ պատասխանել	8,9%	0,6%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Որպես հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորագույն խոչընդոտ հեռախոսային հարցման մասնակիցները առանձնացրել են միջավայրի անմատչելիությունն ու հասարակության վերաբերմունքը, իսկ հաշմանդամություն ունեցող բնակչության կողմից միջավայրի անմատչելիության հետ մեկտեղ լրջագույն խոչընդոտ է համարվել հաշմանդամությունն ու առողջական խնդիրները (տե՛ս Աղյուսակ 23):

**Աղյուսակ 23. Ինչն է խանգարում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը հասարակական կյանքին**

Խտրիչներ	Հանրություն			Հաշմ. ունեցող բնակչություն		
	Ամենալուրջ խոչընդոտ	Խոչընդոտ	Ոչ լուրջ խոչընդոտ	Ամենալուրջ խոչընդոտ	Խոչընդոտ	Ոչ լուրջ խոչընդոտ
Հաշմանդամությունը և առողջական խնդիրները	26,1%	27,8%	46,0%	42,2%	29,9%	27,9%
Հասարակության վերաբերմունքը	36,3%	36,0%	27,6%	14,3%	46,1%	39,6%
Միջավայրի անմատչելիությունը	37,5%	36,1%	26,3%	43,5%	24,1%	32,4%


Հաշմանդամություն չունեցող և հաշմանդամություն ունեցող ուսանողների ընկերների թիվը բուհում և բուհից դուրս էապես չի տարբերվում: Եթե դիտարկենք հաշմանդամություն ունեցող ընկերների միջին թիվը, ապա կտեսնենք, որ այն ավելի շատ է հաշմանդամություն ունեցող ուսանողների մոտ (տե՛ս Աղյուսակ 24): Հանրային կարծիքի ուսումնասիրման դեպքում հարցվածների հաշմանդամություն ունեցող ընկերների միջին թիվը կազմել է 4, իսկ հաշմանդամություն ունեցող բնակչության մոտ՝ 3:

**Աղյուսակ 24. Քանի ընկեր ունեք բուհում և բուհից դուրս**

	Հաշմ. չունեցող ուսանողներ		Հաշմ. ունեցող ուսանողներ	
	Ընդհանուր ընկերների միջին թիվը	Հաշմ. ունեցող ընկերների միջին թիվը	Ընդհանուր ընկերների միջին թիվը	Հաշմ. ունեցող ընկերների միջին թիվը
Ընկերները բուհում	22	2	18	2
Ընկերները բուհից դուրս	35	3	38	8

Ինչպես հանրության, այնպես էլ հաշմանդամություն չունեցող ուսանողների մոտ հաշմանդամություն ունեցող ընկերների մեծ մասը հանդիսանում են հենաշարժողական և տեսողական խնդիրներ ունեցողներ (տե՛ս Գծապատկեր 7):

**Գծապատկեր 7. Ընկերների հաշմանդամության տեսակ**





Այն հարցվածները, ովքեր չունեն հաշմանդամ ընկերներ, դա հիմնականում (հաշմանդամություն չունեցող ուսանողների 89,6%-ը և հեռախոսային հարցման մասնակիցների 36%-ը) կապում են իրենց շրջապատում հաշմանդամություն ունեցող անձանց բացակայության հետ (տե՛ս Աղյուսակ 25): Ֆիզիկական անմատչելիությունը որպես ընկերությանը և շփմանը խոչընդոտող գործոն նշել է հանրության 11%:

Հարկ է նշել նաև, որ հանրային կարծիքի ուսումնասիրությանն ուղղված հեռախոսային հարցման շրջանակներում հարցվածների 9,3%-ը նշեցին, որ ունեն հաշմանդամություն ունեցող հարազատ մարդ, ընտանիքի անդամ:

**Աղյուսակ 25. Հաշմանդամություն ունեցող ընկերներ չունենալու պատճառները**

Պատճառներ	Հաշմ. չունեցող ուսանող	Հանրություն
Իմ շրջապատում չկա հաշմանդամություն ունեցող անձ	89,6%	37,4%
Իմ շրջապատում կա հաշմանդամություն ունեցող անձ, բայց մենք ուղղակի ծանոթներ ենք	0,4%	28,7%
Իմ շրջապատում կա հաշմանդամություն ունեցող անձ, բայց ցանկություն չունեմ նրա հետ շփվելու	0,4%	3,6%
Իմ շրջապատում կա հաշմանդամություն ունեցող անձ, բայց շփվելը կապված է միջավայրային դժվարությունների հետ (ֆիզիկական անմատչելիություն)	3,1%	10,5%
Իմ շրջապատում կա հաշմանդամություն ունեցող անձ, հարազատ մարդ է, ընտանիքի անդամ է	-	9,0%
Իմ շրջապատում կա հաշմանդամություն ունեցող անձ, բայց ինձ համար էնոցիոնալ ծանր է նրա հետ շփումը	4,0%	7,5%
Իմ շրջապատում կա հաշմանդամություն ունեցող անձ, բայց նա խուսափում է շփվելուց	2,5%	3,3%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Ուսումնասիրելով հաշմանդամություն ունեցող և չունեցող ուսանողների դիրքորոշումը հաշմանդամների համար բուհի մատչելիության վերաբերյալ՝ ստորև ներկայացված աղյուսակի տվյալներից կարելի է դատել, որ հարցվածների գերակշռող մասը այն համարում է առաջնային և անհապաղ լուծում պահանջող խնդիր (տե՛ս Աղյուսակ 26): Հետաքրքիր է, որ հաշմանդամություն չունեցողների ավելի բարձր տոկոսը՝ 85,6%-ը ունեն այս դիրքորոշումը համեմատած հաշմանդամություն ունեցողների 77,1%-ի հետ: Ի դեպ, հաշմանդամություն ունեցող ուսանողներն ավելի հաճախ են համաձայնվել այն կարծիքի հետ, որ բուհի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար բոլորովին կարևոր չէ, և բուհում կան ավելի կարևոր խնդիրներ՝ համեմատած հաշմանդամություն չունեցող ուսանողների 4,9% հետ (համապատասխանաբար 10,7% և 4,9%):

**Աղյուսակ 26. Ստորև բերված դատողություններից որի՞ հետ եք համաձայն**

Դատողություններ	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող
Բուհի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է և անհապաղ լուծում է պահանջում	85,6%	77,1%
Բուհի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար այնքան էլ կարևոր խնդիր չէ	9,5%	12,2%
Բուհի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար բոլորովին կարևոր չէ, բուհում կան շատ ավելի կարևոր խնդիրներ	4,9%	10,7%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Անդրադառնալով բուհի ֆիզիկական և ուսումնական, կրթական ծրագրերի մատչելիության վերաբերյալ հաշմանդամություն չունեցող ուսանողների գնահատականներին՝ պարզ դարձավ, որ ըստ նրանց, ֆիզիկական մատչելիությունն ապահովված չէ հենաշարժողական, տեսողական և մտավոր խնդիրներ ունեցող ուսանողների համար, իսկ լսողական և խոսքային խնդիրներ ունեցողների համար ավելի շուտ ապահովված է: Հաշմանդամություն ունեցող բնակչության կարծիքով, բուհերը բոլորովին մատչելի չեն հաշմանդամության ոչ մի տեսակի մարդկանց համար (տե՛ս Աղյուսակ 27):

**Աղյուսակ 27 (սկիզբ). Ձեր բուհը ֆիզիկապես մատչելի է**

Հաշմանդամության տեսակ	Լիովին մատչելի է			Ավելի շուտ մատչելի է		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար	13,1%	21,4%	6,3%	14,8%	13,7%	4,4%
Տեսողական խնդիրներ ունեցողների համար	19,1%	28,2%	6,3%	27,6%	28,2%	9,5%
Լսողական խնդիրներ ունեցողների համար	23,6%	29,8%	7,3%	31,2%	23,7%	10,8%
Մտավոր խնդիրներ ունեցողների համար	14,7%	19,1%	6,0%	21,3%	13,7%	7,3%
Խոսքային խնդիրներ ունեցողների համար	30,0%	38,2%	9,5%	32,3%	25,2%	12,0%

**Աղյուսակ 27 (շարունակություն I). Ձեր բուհը ֆիզիկապես մատչելի է**

Հաշմանդամության տեսակ	Ավելի շուտ մատչելի չէ			Բոլորովին մատչելի չէ		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար	22,6%	26,7%	13,9%	49,0%	37,4%	57,6%
Տեսողական խնդիրներ ունեցողների համար	20,8%	22,9%	13,6%	31,4%	19,1%	47,8%
Լսողական խնդիրներ ունեցողների համար	18,1%	20,6%	11,7%	25,8%	19,8%	46,8%
Մտավոր խնդիրներ ունեցողների համար	21,7%	18,3%	9,2%	38,8%	38,9%	50,9%
Խոսքային խնդիրներ ունեցողների համար	15,8%	13,0%	11,4%	20,3%	19,1%	43,7%

**Աղյուսակ 27 (շարունակություն II). Ձեր բուհը ֆիզիկապես մատչելի է**

Հաշմանդամության տեսակ	Դժվարանում եմ պատասխանել		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար	0,6%	0,8%	17,7%
Տեսողական խնդիրներ ունեցողների համար	1,0%	1,5%	22,8%
Լսողական խնդիրներ ունեցողների համար	1,4%	6,1%	23,4%
Մտավոր խնդիրներ ունեցողների համար	3,5%	9,9%	26,6%
Խոսքային խնդիրներ ունեցողների համար	1,6%	4,6%	23,4%

Համաձայն հաշմանդամություն ունեցող և չունեցող ուսանողների գնահատականների, բուհի ուսումնական, կրթական ծրագրերի մատչելիությունն ավելի շատ ապահովված է հենաշարժողական, տեսողական և խոսքային, քան՝ լսողական և մտավոր խնդիրներ ունեցողների համար: Հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող բնակչությունն այս անգամ ևս շեշտադրել է ծրագրերի անմատչելիությունը (տե՛ս Աղյուսակ 28):

**Աղյուսակ 28 (սկիզբ). Ապահովված է արդյոք բուհի ուսումնական, կրթական ծրագրերի մատչելիությունը**

Հաշմանդամության տեսակ	Այո			Ավելի շուտ այո		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար	53,3%	64,9%	17,1%	19,4%	16,0%	12,7%
Տեսողական խնդիրներ ունեցողների համար	21,3%	30,5%	14,2%	20,1%	24,4%	13,6%
Լսողական խնդիրներ ունեցողների համար	18,7%	26,0%	13,3%	23,7%	27,5%	13,3%
Մտավոր խնդիրներ ունեցողների համար	12,9%	16,0%	9,5%	16,0%	15,3%	8,2%
Խոսքային խնդիրներ ունեցողների համար	27,6%	32,1%	12,7%	31,2%	26,7%	13,0%

**Աղյուսակ 28 (շարունակություն I). Ապահովված է արդյոք բուհի ուսումնական, կրթական ծրագրերի մատչելիությունը**

Հաշմանդամության տեսակ	Ավելի շուտ ոչ			Ոչ		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար	10,9%	6,9%	11,1%	13,8%	10,7%	32,0%
Տեսողական խնդիրներ ունեցողների համար	23,2%	19,1%	12,7%	31,3%	20,6%	32,0%
Լսողական խնդիրներ ունեցողների համար	24,7%	19,1%	14,2%	28,6%	23,7%	31,3%
Մտավոր խնդիրներ ունեցողների համար	22,4%	17,6%	11,7%	43,2%	42,7%	41,8%
Խոսքային խնդիրներ ունեցողների համար	15,3%	14,5%	10,8%	22,2%	22,1%	32,6%

**Աղյուսակ 28. (շարունակություն II). Ապահովված է արդյոք բուհի ուսումնական, կրթական ծրագրերի մատչելիությունը**

Հաշմանդամության տեսակ	Դժվարանում են պատասխանել		
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. ունեցող բնակչություն
Հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար	2,7%	1,5%	27,2%
Տեսողական խնդիրներ ունեցողների համար	4,1%	5,3%	27,5%
Լսողական խնդիրներ ունեցողների համար	4,3%	3,8%	27,8%
Մտավոր խնդիրներ ունեցողների համար	5,4%	8,4%	28,8%
Խոսքային խնդիրներ ունեցողների համար	3,7%	4,6%	31,0%

Հարցվողների կարծիքով, ներկայումս բուհերում սովորող հաշմանդամություն ունեցող ուսանողների 83,2%-ի համար բուհի ֆիզիկական մատչելիությունը լիովին ապահովված է, իսկ ուսումնական, կրթական ծրագրերը մատչելի են հաշմանդամություն ունեցող ուսանողների 80,2%-ի համար (տե՛ս Աղյուսակ 29):

**Աղյուսակ 29. Որքանով է բուհը մատչելի անձամբ Ձեզ համար**

Բուհի մատչելիություն	Լիովին մատչելի է	Ավելի շուտ մատչելի է	Ավելի շուտ մատչելի չէ	Բոլորովին մատչելի չէ
Ֆիզիկական	83,2%	9,9%	4,6%	2,3%
Ուսումնական, կրթական ծրագրերի	80,2%	16,8%	1,5%	1,5%

Բուհում խտրական վերաբերմունքի հետ հաշմանդամություն ունեցող ուսանողները շատ հազվադեպ են բախվում: Հարցված հաշմանդամություն ունեցող ուսանողների 80,9%-ը երբեք չեն բախվել դասախոսների կողմից խտրական վերաբերմունքի, 86,3%-ը՝ բուհի ադմինիստրացիայի կողմից և 93,9%-ը՝ համակուրսեցիների կողմից (տե՛ս Աղյուսակ 30): Հարցվածները հազվադեպ են բախվել նաև քննությունների կազմակերպման անմատչելիության և հաշմանդամների հանդեպ ավելորդ ուշադրության հետ: Իսկ դասախոսների և բուհի ադմինիստրացիայի կողմից հաշմանդամություն ունեցող ուսանողների նկատմամբ զիջումները բավական տարածված երևույթ են: Հարկ է նշել նաև, որ բուհի ադմինիստրացիայի կողմից դասապրոցեսի հարմարեցման պատրաստակամություն հաշմանդամություն ուսանողներն ավելի հաճախ են նկատում, քան դասախոսների կողմից:

**Աղյուսակ 30. Որքան հաճախ եք Դուք հանդիպում ստորև նշված իրավիճակների հետ բուհում**

Իրավիճակներ	Գրեթե միշտ	Հաճախ	Հազվադեպ	Երբեք	Ընդամենը
Դասախոսների կողմից խտրական վերաբերմունք	1,5%	3,1%	14,5%	<b>80,9%</b>	100,0%
Բուհի ադմինիստրացիայի կողմից խտրական վերաբերմունք	3,1%	2,3%	8,4%	<b>86,3%</b>	100,0%
Համակուրսեցիների կողմից խտրական վերաբերմունք	3,8%	2,3%	-	<b>93,9%</b>	100,0%
Դասախոսների կողմից դասապրոցեսը հարմարեցնելու պատրաստակամություն	13,7%	25,2%	25,2%	<b>35,9%</b>	100,0%
Բուհի ադմինիստրացիայի կողմից դասապրոցեսը հարմարեցնելու պատրաստակամություն	10,7%	21,9%	15,8%	<b>51,6%</b>	100,0%
Դասախոսների կողմից զիջումներ	4,6%	29,4%	29,4%	<b>45,0%</b>	100,0%
Բուհի ադմինիստրացիայի կողմից զիջումներ	7,6%	21,9%	26,5%	<b>44,0%</b>	100,0%
Համակուրսեցիների կողմից գերհոգատարություն	11,5%	18,3%	18,3%	<b>51,9%</b>	100,0%
Համակուրսեցիների օգնություն	26,7%	25,2%	19,1%	<b>29,0%</b>	100,0%
Քննությունների կազմակերպման անմատչելիություն	5,3%	4,6%	13,7%	<b>76,3%</b>	100,0%
Հաշմանդամների նկատմամբ ավելորդ ուշադրություն (ուշադիր նայում են, դիտարկում են ինձ)	2,3%	11,1%	16,4%	<b>70,2%</b>	100,0%

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրելով հարցվածների տեսակետը Աղյուսակ 31-ում ներկայացված դատողությունների մասին, կարելի է ասել, որ նրանց գերակշռող մասը համարել է, որ բուհի ադմինիստրացիան պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող ուսանողների անվճար ուսուցումը բուհում, բուհի ֆիզիկական և կրթական ծրագրերի մատչելիությունը, իսկ դասախոսները պետք է դասախոսությունները կազմակերպեն այնպես, որպեսզի նյութը մատչելի լինի հաշմանդամություն ունեցող ուսանողների համար և քննությունները կազմակերպեն վերջիններիս համար հարմար եղանակով: Հարցվածների կեսից ավելին պնդել է, որ համակուրսեցիները ուսանողական խնջույքները կազմակերպելիս պետք է հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող համակուրսեցիների հնարավորությունները:

Հատկանշական է, որ հարցվածների կեսից ավելին հիմնականում դեմ է արտահայտվել այն դատողություններին, համաձայն որոնց, դասախոսները պետք է քննությունների ժամանակ ընդատաջեն ու բարձր գնահատեն հաշմանդամություն ունեցող ուսանողներին, և համակուրսեցիները պետք է հաշմանդամություն ունեցող ուսանողի փոխարեն հանձնեն քննությունները, օգնեն արտագրել:

**Աղյուսակ 31. Որքանով եք համաձայն ստորև բերված դատողությունների հետ**

Դատողություններ	Լիովին համաձայն եմ		Ավելի շուտ համաձայն եմ		Ավելի շուտ համաձայն չեմ		Բոլորովին համաձայն չեմ	
	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող
Բուհի ադմինիստրացիան պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող ուսանողների անվճար ուսուցումը բուհում	58,8%	80,2%	30,1%	15,3%	8,5%	1,5%	2,6%	3,1%
Բուհի ադմինիստրացիան պետք է ապահովի բուհի ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող ուսանողների համար	84,7%	86,3%	13,8%	10,7%	1,4%	2,3%	0,1%	0,8%
Բուհի ադմինիստրացիան պետք է ապահովի բուհի կրթական ծրագրերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող ուսանողների համար	77,8%	76,5%	18,7%	13,2%	2,3%	8,6%	1,0%	1,7%
Դասախոսները պետք է դասախոսությունները կազմակերպեն այնպես, որ նյութը մատչելի լինի հաշմանդամություն ունեցող ուսանողների համար	77,4%	72,0%	17,0%	23,1%	4,3%	2,5%	1,2%	2,5%
Դասախոսները պետք է քննությունները կազմակերպեն հաշմանդամություն ունեցող ուսանողներին հարմար եղանակով (գրավոր, բանավոր, լրացուցիչ ժամանակի տրամադրում և այն)	75,4%	60,8%	17,6%	24,9%	5,3%	9,4%	1,6%	4,9%
Դասախոսները պետք է քննությունների ժամանակ ընդատաջեն և բարձր գնահատեն հաշմանդամություն ունեցող ուսանողներին	15,6%	9,2%	27,1%	16,0%	27,6%	20,6%	29,7%	54,2%

Համակորսեցիները պետք է կազմակերպեն ուսանողական խնջույքները՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող համակորսեցիների հնարավորությունները	80,7%	54,7%	15,5%	26,5%	1,8%	10,1%	1,8%	8,7%
Համակորսեցիները պետք է հաշմանդամություն ունեցող ուսանողի փոխարեն հանձնեն քննությունները, օգնեն արտագրել	4,9%	4,6%	9,6%	6,1%	12,8%	9,2%	72,7%	80,2%

*Հարցվածների կարծիքով, հաշմանդամություն ունեցող անձանց բուհում ավելի ինտեգրված լինելու համար, առաջին հերթին, պետք է փոխվի հասարակության վերաբերմունքը:* Այնուհետև հարցվածների զգալի մասը կարևորել է բուհերի ֆիզիկական մատչելիության ապահովման հարցը, իսկ հաշմանդամություն չունեցող ուսանողների 19,4%-ը՝ կրթական ծրագրերի մատչելիությունը (տե՛ս Աղյուսակ 32):

**Աղյուսակ 32. Ինչ է անհրաժեշտ անել, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք բուհում ավելի ինտեգրված/ներառված լինեն**

Պատասխան	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն	Հաշմ. ունեցող բնակչություն
Ապահովել բուհերի ֆիզիկական մատչելիությունը	10,0%	32,2%	25,5%	20,9%
Հարմարեցնել կրթական ծրագրերը և դասապրոցները	19,4%	1,9%	9,5%	5,1%
Ֆինանսական աջակցություն կազմակերպել	-	-	9,3%	19,3%
Փոխել վերաբերմունքը	49,5%	46,9%	35,9%	37,1%
Մշակել օրենքներ	0,4%	0,9%	0,1%	-
Բուժման պայմանները լավացնել	-	-	2,8%	-
Ստեղծել տրանսպորտի հարմարություն/ ուղեկցող	0,1%	3,8%	2,7%	5,1%
Բացել առանձին բուհեր/ուսուցում/լսարան/ տնային պայմաններում ուսուցում	-	7,6%	1,5%	6,2%
Ոչինչ պետք չէ անել	0,2%	2,4%	0,3%	-
Դժվարանում եմ պատասխանել	0,4%	4,3%	5,0%	6,4%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Գնահատելով հասարակության վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ, հարցվածների մեծամասնությունը նշել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակությունն աշխատում է ստեղծել հարմար միջավայր և ապահովում է հավասար հնարավորություններ: *Միևնույն ժամանակ, հարցվածների բավական բարձր փոկոս համարում են, որ հասարակությունը սահմանափակում է հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքները և անարևոտ է նրանց* (տե՛ս Աղյուսակ 33): Ընդ որում, այս ցուցանիշը առավել բարձր է հաշմանդամություն ունեցող ուսանողների մոտ:

**Աղյուսակ 33. Ինչպե՞ս է մեր հասարակությունը, ընդհանուր առմամբ, վերաբերվում հաշմանդամություն ունեցող անձանց**

Պատասխան	Հաշմ. չունեցող Ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն	Հաշմ. ունեցող բնակչություն
Աշխատում է ստեղծել հարմար միջավայր, ապահովում է հավասար հնարավորություններ	39,5%	51,1%	36,8%	36,7%
Անտեսում է նրանց	24,5%	19,8%	34,9%	25,6%
Սահմանափակում է նրանց իրավունքները	33,7%	27,5%	19,4%	31,0%
Դժվարանում եմ պատասխանել	2,3%	1,5%	8,9%	6,6%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>

Բոլոր հարցվածների կարծիքով, հասարակությունը հաշմանդամություն ունեցող անձանց ավելի շատ պետք է օգնի, աջակցի ինտեգրման հարցում, դրանով հանդերձ վերաբերի որպես հասարակության լիարժեք անդամի՝ հավասարը հավասարին (տե՛ս Աղյուսակ 34):

**Աղյուսակ 34. Հասարակությունն ինչպե՞ս պետք է վերաբերվի հաշմանդամություն ունեցող անձանց**

Պատասխան	Հաշմ. չունեցող ուսանող	Հաշմ. ունեցող ուսանող	Հանրություն	Հաշմ. ունեցող բնակչություն
Որպես հավասարը հավասարին	30.2%	41,1%	35,6%	43,5%
Օգնել, աջակցել, ինտեգրել	53.5%	44,4%	46,0%	43,9%
Արտոնություններ տրամադրել	8.9%	4,2%	7,0%	1,4%
Խղճահարությամբ	2.2%	1,9%	6,7%	1,6%
Զխղճալ, չպիտակավորել	4.9%	6,5%	3,7%	7,8%
Բժշկական օգնություն տրամադրել	-	-	0,2%	-
Պաշտպանել իրավունքները	0,2%	0,5%	-	1,2%
Դժվարանում եմ պատասխանել	0,1%	0,5%	0,8%	0,4%
<b>Ընդամենը</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>	<b>100,0%</b>



## ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառականության գլխավոր նախադրյալներից մեկն է, քանի որ այն ապահովում է ֆիզիկական միջավայրի հասանելիությունը տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար: Առանց ֆիզիկական մատչելիության անհնար է պատկերացնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը և արդյունավետ մասնակցությունը կյանքի ամենատարբեր ոլորտներում, այդ թվում նաև բարձրագույն կրթական համակարգում:

Ֆիզիկական մատչելիության կարևորությունն ընդգծվել է սույն հետազոտությանը մասնակցած շահագրգիռ բոլոր կողմերի՝ հաշմանդամություն ունեցող ուսանողների, բուհական համակարգում չներգրավված հաշմանդամություն ունեցող անձանց, բուհերի ադմինիստրատիվ ղեկավարության, դասախոսների, հաշմանդամություն չունեցող ուսանողների և ընդհանուր հանրության կողմից՝ քանական հարցումների և որակական հարցազրույցների ընթացքում: Մասնավորապես, հեռախոսային հարցման մասնակիցները միջավայրի անմատչելիությունը առանձնացրել են որպես հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության նշանակալի խոչընդոտ, իսկ բուհի տարածքում տեղաշարժման և ֆիզիկական մատչելիության պայմանների ապահովումը ադմինիստրատիվ անձնակազմի և դասախոսների կողմից նշվել է որպես բուհի ներառականության ապահովման ուղղությամբ առաջին անհրաժեշտության միջոցառում: Ավելին, հաշմանդամություն ունեցող ուսանողների 77,1% և հաշմանդամություն չունեցող ուսանողների 85,6% նշել են, որ բուհի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է և անհապաղ լուծում է պահանջում:

Բարձրագույն կրթության ներառականության գնահատումը ամբողջական չէր լինի առանց բուհերի ֆիզիկական մատչելիության համապարփակ գնահատման: Այս պատճառով, հետազոտության առանձին հատված նվիրվել է բուհական հաստատությունների ֆիզիկական մատչելիության գնահատմանը, որի իրականացման համար կիրառվել է փաստացի դիտարկման մեթոդը: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են ինչպես շինության մուտքը, այնպես էլ լսարանները, վարչական գրասենյակներ (դեկանատ, ուսանողական խորհուրդ և այլն), գրադարաններ, ընթերցասենյակներ, ճաշարաններ, կոնֆերանս-սենյակներ և դահլիճներ, համակարգչային սենյակներ և այլն:

### ԸՆՏՐԱՆՔ

Դիտարկման ընտրանք են կազմել հետազոտության մեջ ներառված 29 բուհերի՝ ակադեմիական նշանակության բոլոր մասնաշենքերը (այդ թվում գրադարանային և վարչական), ընդհանուր թվով 57 մասնաշենք:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիտարկման համար կիրառվել է բուհական շինությունների մատչելիության գնահատման հատուկ *Մատչելիության դիտարկման քարտի*՝ բաղկացած հետևյալ մասերից (տե՛ս Հավելված).

- Անցումը փողոցից դեպի հաստատության մուտք
- Հաստատության գլխավոր մուտքը
- Իրավիճակը հաստատության առաջին հարկում
- Իրավիճակը հաստատության մյուս հարկերում
- Մեկից ավելի հարկ ունեցող/բարձր հարկում գտնվող մասնաշենքերում վերելակի մատչելիություն
- Վերելակ ունեցող մասնաշենքերում անցումը դեպի վերելակ
- Հանրային սանհանգույց
- Բուժկետ
- Համակարգչային սենյակ

- Ադմինիստրատիվ գրասենյակներ
- Կոնֆերանս-սենյակ/դահլիճ
- Բուֆետ
- Լսարաններ
- Գրադարան/ընթերցարան:

Շինության յուրաքանչյուր հատվածում և յուրաքանչյուր սենյակում առկա խոչընդոտների (աստիճաններ, մայթեր, դռներ և այլն) վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն է հավաքագրվել: Տվյալները մուտքագրվել են և վերլուծվել MS Excel ծրագրի օգնությամբ:

***Տվյալների վերլուծության համար մշակվել և կիրառվել է մատչելիության գնահատման հետևյալ քառասրիճան սանդղակը:***

**Մատչելի՝** տեղաշարժման խնդիրներ ունեցող անձինք կարող են մուտք գործել, ազատ տեղաշարժվել և օգտվել բոլոր ծառայություններից/պարագաներից լիովին ինքնուրույն, առանց որևէ օգնության:

**Հիմնականում մատչելի՝** տեղաշարժման խնդիրներ ունեցող անձինք կարող են մուտք գործել, տեղաշարժվել և օգտվել բոլոր ծառայություններից/պարագաներից աննշան օգնության շնորհիվ:

**Դժվարամատչելի՝** տեղաշարժման խնդիրներ ունեցող անձինք կարող են մուտք գործել, տեղաշարժվել և օգտվել ծառայություններից/պարագաներից միայն նշանակալի օգնության շնորհիվ:

**Անմատչելի՝** տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար մուտք գործելը, տեղաշարժվելը և բոլոր ծառայություններից/պարագաներից օգտվելը կապված է լրացուցիչ մեծ միջոցառումների կազմակերպման հետ և գործնականում գրեթե անհնար է:

Դիտարկված յուրաքանչյուր սենյակ/շինության հատված գնահատվել է առանձին, իսկ այնուհետ գնահատվել է մասնաշենքի ընդհանուր մատչելիությունը: ***Սորոն ամփոփված է ընդհանրացված տեղեկատվություն ըստ բլոկերի*** (տե՛ս Աղյուսակ 35):

**Աղյուսակ 35. Բուհերի մատչելիության վերաբերյալ թվային վերլուծություն**


	Մատչելի	Հիմնականում մատչելի	Դժվարամատչելի	Անմատչելի	Առկա չէ
Անցումը փողոցից դեպի հաստատության մուտք	75,4%	5,26%	8,77%	10,5%	-
Հաստատության գլխավոր մուտքը	14%	1,75%	10,5%	73,7%	-
Իրավիճակը հաստատության առաջին հարկում	35,08%	8,77%	0%	56,14%	-
Իրավիճակը հաստատության մյուս հարկերում	72,7%	7,27%	0%	20%	-
Մեկից ավելի հարկ ունեցող/բարձր հարկում գտնվող մասնաշենքերում վերելակի մատչելիություն	17,8%	7,1%	5,3%	1,7%	67,8%
Վերելակ ունեցող մասնաշենքերում անցումը դեպի վերելակ	83,3%	0%	0%	16,7%	-
Հանրային սանհանգույց	3,5%	0%	0%	96,49%	-

Բուժկետ	34,5%	0%	1,8%	1,8%	61,8%
Համակարգչային սենյակ	47,3%	3,6%	1,8%	3,6%	43,6%
Ադմինիստրատիվ գրասենյակներ	75%	7,1%	7,1%	1,8%	9%
Կոնֆերանս սենյակ/դահլիճ	41,8%	3,6%	7,3%	14,5%	32,7%
Բուֆետ	46,4%	1,8%	0%	16%	35,7%
Լսարաններ	68%	10,7%	5,3%	7,1%	8,9%
Գրադարան/ընթերցարան	37,5%	3,6%	5,4%	8,9%	44,6%
<b>Ընդհանուր մատչելիություն</b>	<b>1,75%</b>	<b>1,75%</b>	<b>0%</b>	<b>96,5%</b>	<b>-</b>

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մատչելիության դիտարկման արդյունքները վկայում են, որ *դիտարկված 29 բուհերին պարկանող մասնաշենքերի գերակշռող մեծամասնությունը՝ 57 մասնաշենքերից 55-ը (96,5%) անմատչելի են տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար* (տե՛ս Գծապատկեր 8):

### Գծապատկեր 8. Դիտարկված բուհական մասնաշենքերի մատչելիություն




Խոչընդոտներ հայտնաբերվել են շինությունների գրեթե բոլոր հատվածներում և սենյակներում, սակայն հիմնական խնդիրներն են հաստատության գլխավոր մուտքի անմատչելիությունը, խոչընդոտները հաստատության առաջին հարկում, վերելակի բացակայությունը կամ դրա անմատչելիությունը և մատչելի (հարմարեցված) սանհանգույցի բացակայությունը:

### ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԸ

*Դիտարկված շինությունների 84,2%-ի գլխավոր մուտքը անմատչելի կամ հիմնականում անմատչելի է* (տե՛ս Գծապատկեր 9): Այսպիսով, անհնար է դառնում տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց մուտքը դեպի շենք: Հաստատությունների գլխավոր մուտքի մոտ հայտնաբերվել են հետևյալ խոչընդոտները՝ աստիճաններ առանց թեքահարթակի կամ նորմատիվներին ոչ համապատասխան թեքահարթակով, դռան մոտ 3 սմ գերազանցող բարձրությամբ շեմ և նեղ դուռ: Որոշակի դեպքերում մուտքը սահմանափակել են տարատեսակ առարկաներ՝ ծաղկաման, աղբաման և այլն:


